Ձև N 2

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ծրագրի հերթական համարը	նպատակը	միջոցառումների անվանումները	միջոցառումների իրականացման արդյունքները	միջոցառումների չկատարման, այդ թվում՝ սահմանված ժամկետում, պատճառները	ծանոթագրություն
1	2	3	4	5	6
2	2.Արտադրողականության աճ և գործազրկության կրճատում Արտադրողականություն 12$ ՀՆԱ/մարդ x ժամ; գործազրկություն՝	2.1 Ռազմավարական և առաջնահերթ ոլորտներում տեխնոլոգիական և բիզնես պրոցեսների օպտիմալացում	***Տնտեսական ակտիվության և արդյունաբերության խթանման նպատակով իրականացվել են հետևյալ աշխատանքները.*** Արտադրողականության խթանման նպատակային ծրագրի շրջանակում 2022 թվականի մարտից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում ձևավորվել է վարկային/լիզինգային ընդհանուր պորտֆել՝ շուրջ 471 մլրդ ՀՀ դրամ հանրագումարով: Ծրագրի շրջանակում կնքվել է թվով 9435 վարկային/լիզինգային պայմանագիր, ծրագրի շահառուների թիվը կազմել է 5176 և ձեռք է բերվել 14247 միավոր մեքենասարքավորումներ և դրանց բաղկացուցիչ մասեր: 2025 թվականի պետական բյուջեից ծրագրի իրականացմանը ուղղվել է շուրջ 22,9 մլրդ ՀՀ դրամի սուբսիդավորում:		
		2.2 Աշխատաշուկայում բարձր որակավորում ունեցող	***Աշխատաշուկայում բարձր որակավորում ունեցող մասնագետների ներգրավումը***		

		մասնագետների ներգրավում տեղական ընկերություններում	***տեղական ընկերություններում ապահովելու նպատակով*** միջոցառման շրջանակում 2025 թվականին փոխհատուցում է ստացել թվով 33 կազմակերպություն՝ 377 բարձր որակավորում ունեցող մասնագետի համար: Բարձր որակավորում ունեցող մասնագետների ներգրավման նպատակային ծրագրի շրջանակում 2025 թվականի ընթացքում փոխհատուցման գումարը կազմել է մոտ 1,4 մլրդ ՀՀ դրամ:		
		2.3 Տնտեսության մեջ թվային գործիքների կիրառման խթանման հայեցակարգի հաստատում	Կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրով հաստատված և Էկոնոմիկայի նախարարության իրավասության՝ «2.3 «Տնտեսության մեջ թվային գործիքների կիրառման խթանման հայեցակարգի հաստատում» միջոցառման շրջանակում Էկոնոմիկայի նախարարության կողմից մշակվել և Էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի հոկտեմբերի 9-ի N1932-Ա հրամանով հաստատվել է «Փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտների կողմից թվային գործիքների կիրառման խթանման հայեցակարգային մոտեցումները», որի նպատակն է նպաստել Հայաստանի ՓՄՁ-ների թվային հասունության և արտադրողականության մակարդակների բարձրացմանը, ներդնել թվային գործիքների խթանման և խրախուսման մեխանիզմներ: Կառավարության 2020 թվականի մարտի 26-ի N355-Լ որոշման 1-ին հավելվածով հաստատված Արտադրողականության խթանման նպատակային ծրագրի շրջանակում		

			օժանդակություն է տրամադրվում այն տնտեսավարողներին, ովքեր վարկ/լիզինգ են ներգրավում բիզնես գործընթացները օպտիմալացնելու համար թվային հարթակներ ներգրավելու նպատակով: Օժանդակությունը տրամադրվում է վարկի/լիզինգի տարեկան տոկոսադրույքի 6-10% սուբսիդավորման ձևով: Էկոնոմիկայի նախարարության և ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության (UNIDO) հետ համատեղ ստորագրված «2022-2026 թվականների ներառական և կայուն արդյունաբերական զարգացումը Հայաստանում» երկրի ծրագրային փաստաթղթի շրջանակներում՝ նախատեսվում է տնտեսական աճի, արդյունաբերության արդիականացման, մրցունակության և համաշխարհային շուկայի ինտեգրման նպատակով Հայաստանի ՓՄՁ-ների աջակցության ապահովում՝ թվային փոխակերպման միջոցով: UNIDO-ի և Էկոնոմիկայի նախարարության համագործակցության շրջանակում UNIDO-ի կողմից ներկայացվել է Արդյունաբերական ինովացիոն կենտրոնի ստեղծման ծրագրային առաջարկ: Ծրագիրը բաղկացած է երեք բաղադրիչներից՝ թվային հարթակի ստեղծում, գործընկերություն և համագործակցություն, ինչպես նաև լավագույն փորձ և լայն ներգրավվածություն: Ծրագրի առաջին բաղադրիչով նախատեսում է թվային հարթակի ստեղծում, որտեղ ՓՄՁ-ները կկարողանան անցնել թվային վերափոխման փուլեր (գնահատում, պլանավորում, իրականացում, վերահսկում), ստանալ խորհրդատվություն, մասնակցել վերապատրաստումների և կապ հաստատել տեխնոլոգիական ոլորտի գործընկերների հետ: Ծրագրի հետագա իրականացումն արդյունավետ կազմակերպելու		

			նպատակով՝ կազմակերպվել է հանդիպում՝ UNIDO-ի Հայաստանի գրասենյակի ներկայացուցիչների մասնակցությամբ: Ներկայումս քննարկվում է վերոնշյալ ծրագրի իրականացման ճանապարհային քարտեզը: Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) կողմից կազմակերպված «Արևելյան գործընկեր երկրներում ՓՄՁ-ների թվային փոխակերպման աջակցություն» ծրագրի շրջանակներում 2025թ. տեղի է ունեցել պետական, մասնավոր և կրթական հատվածների մասնակցությամբ միջոցառումներ: Քննարկվել են ՓՄՁ-ների թվային փոխակերպմանն ուղղված քաղաքականությունը, մարտահրավերները և հնարավորությունները: Ուսումնական այցերի ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել ուսումնասիրել Եվրոպայի թվայնացման նորարարական հաբերի մոդելը և Հայաստանում նմանատիպ հաբի հիմնման հնարավորությունները:		
3	Գործարար և ներդրումային միջավայրի բարելավում Ներդրումներ/ՀՆԱ՝ 25%, ՕՈՒՆ/ՀՆԱ՝ 6%	3.1 Ներդրումային քաղաքականության մշակում և իրագործում, Ներդրումային քաղաքականությունը հաստատելու մասին իրավական ակտի մշակում	**Կատարված է** Ընդունվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի օգոստոսի 24-ի «Ներդրումների ներգրավման ծրագիրը հաստատելու մասին» N 1450-Լ որոշումը:		

		3.2 Ընկերություններում արդիական կորպորատիվ կառավարման համակարգերի ներդրման խթանում	**Կատարված է** • Մշակվել և հրապարակվել են Կորպորատիվ կառավարման առաջընթացի մատրիցան/ուղեցույցը, որն ուղղված է աջակցելու կազմակերպություններին Կորպորատիվ կառավարման կանոնագրքիսկզբունքների աստիճանական ներդրման հարցում: • Մշակվել և հրապարակվել են Կորպորատիվ կառավարման հայտարարագրի 3 ձևաչափեր՝ կազմակերպություններին հնարավորություն տալով ըստ իրենց կորպորատիվ կառավարման համակարգերի հասունության աստիճանի ընտրել և լրացնել դրանցից մեկը: • Մշակվել և հրապարակվել է Կանոնագրքի կիրառման «Հետևի՛ր կամ բացատրի՛ր» սկզբունքին նվիրված ուղեցույց և հոլովակ: • Մշակվել և շրջանառվել է Կանոնագրքի կիրակման մեխանիզմներ սահմանող հայեցակարգի նախագիծը: • Կապիտալի շուկա դուրս եկող ընկերությունների կողմից կորպորատիվ կառավարման կանոնագրքին հետևելու մասով հսկողական մեխանիզմներ սահմանելու նպատակով Թողարկման և վարկանիշավորման աջակցության պետական ծրագրում որպես օժանդակությունից օգտվելու նախապայման սահմանվել է Կանոնագրքին միացած լինելը: • Իրականացվել են կորպորատիվ կառավարման վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանն ուղղված մի շարք միջոցառումներ, վեբինարներ, պանելային քննարկումներ այդ թվում և միջազգային և տեղական գործընկերների հետ համատեղ:		

			• Կանոնագրքի ընկերություններում ներդրմանն աջակցող օժանդակություն է նախատեսվել իրականացնել ՎԶԵԲ կողմից ԷՆ աջակցությամբ իրականացվող Հայաստանի կապիտալի շուկայի աջակցման ծրագրի շրջանակներում:		
		3.3 Գործարար միջավայրի բարելավման ծրագրի մշակում և իրականացում, «Գործարար միջավայրի բարելավման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման հաստատում		Վարչապետի աշխատակազմի 2025 թվականի հունվարի 14-ի թիվ 02/08.1/670-2025 հանձնարարականով՝ միջոցառման կատարման ժամկետը երկարաձգվել է մինչև 2025 թվականի դեկտեմբերի 19-ը: 2025 թվականի մարտին փոխվարչապետ Մհեր Գրիգորյանի մոտ տեղի է ունեցել քննարկում, որտեղ ներկայացվել է կատարված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը: Արդյունքում՝ հանձնարարվել է պատրաստել սահիկաշար՝ Փոխվարչապետի կողմից առաջարկված ուղղությունների համատեքստում ներկայացնելով գործարար և ներդրումային միջավայրը խոչընդոտող յուրաքանչյուր գերատեսչությանը վերաբերելի թեմաները՝ գերատեսչության ղեկավարների հետ համատեղ քննարկելու, խնդիրները ամրագրելու և իրենց իրավասության շրջանակներում լուծումներ առաջարկելու նպատակով: Սահիկաշարը ներկայացվել է Փոխվարչապետին, որը քննարկվել է շահագրգիռ գերատեսչությունների հետ:	

				Արդյունքում որոշվել է, որ յուրաքանչյուր գերատեսչություն իր մասով կվերհանի խնդիրները և կներկայացնի փոխվարչապետ Մեր Գրիգորյանին: Փոխվարչապետ Մեր Գրիգորյանի կողմից 2025 թվակինի հուլիսի 1-ին թիվ 02.6/21214-2025 հանձնարարականով՝ սահիկաշարը ուղարկվել է շահագրգիռ մարմիններին, վերջինիս վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու նպատակով: Միաժամանակ, ներկայումս շրջանառվող «Ներդրումների մասին» օրենքի նախագծի հիմնավորման մեջ անդրադարձ է կատարվել այն ոլորտներին և իրավական ակտերին, որոնք ունեն հավելյալ բարեփոխման կարիք, որոնք դիտարկվելու են որպես ուղեցույց գործարար միջավայրի բարելավման տեսանկյունից՝ համակարգային բարեփոխումներ իրականացնելու նպատակով: 2025թ. դեկտեմբերի 4-ին Վարչապետի աշխատակազմ ներկայացված թիվ 01/27957-2025 գրությամբ առաջարկվել է սույն միջոցառման կատարումը դիտարկել «Ներդրումների մասին» օրենքի նախագծի ընդունումից հետո:	

		3.4 «Տնտեսական բարդ ներդրումային ծրագրերի չափորոշիչները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման հաստատում և դրա շրջանակներում ներդրումային խորհրդի ստեղծում	**Կատարված է** Ընդունվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետությունում տնտեսապես բարդ ապրանքների արտադրությամբ զբաղվող առևտրային ընկերություններին պետական աջակցության տրամադրման ծրագիրը հաստատելու մասին» N 1867-Ն որոշումը		
4	4. Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացում, ՓՄՁ-ի մասնաբաժինը ՀՆԱ-ում՝ 55%	4.1 Նորարարական նախաձեռնությունների հայեցակարգի հաստատում, հաստատումից հետո ծրագրերի մշակում և իրագործում	Կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրով նախատեսված՝ էկոնոմիկայի նախարարության «4.1 Նորարարական նախաձեռնությունների հայեցակարգի հաստատում, հաստատումից հետո ծրագրերի մշակում և իրագործում» միջոցառման շրջանակում էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի հունվարի 31-ի N Հ/281-2024 հրամանով հաստատվել է «Նորարարական նախաձեռնությունների հայեցակարգը», որի նպատակն է համակարգային մոտեցմամբ լուծումներ առաջարկել Հայաստանի Հանրապետության գիտելիքահենք տնտեսության զարգացման ճանապարհին առկա խոչընդոտների հաղթահարման ուղղությամբ: Սահմանված նպատակներին հասնելու համար հայեցակարգով նախանշվել են գիտելիքահենք տնտեսության զարգացմանն ուղղված տնտեսական քաղաքականության հիմնական ուղղությունները: Յուրաքանչյուր ուղղության համար սահմանվել են այն առանցքային նախաձեռնությունները, որոնց իրագործումը կնպաստի արդյունավետորեն գործող գիտելիքահենք տնտեսական համակարգի ձևավորմանը: Կառավարության 2024 թվականի մայիսի 2-ի N640-Ա որոշմամբ սահմանված կարգով՝ ներկայումս շարունակվում են «Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի		

			(այսուհետ՝ Կազմակերպություն) լուծարման աշխատանքները: Որոշման 4-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Էկոնոմիկայի նախարարությունը լուծարման հանձնաժողովին է հանձնել Կազմակերպության համապատասխան փաստաթղթերն ու գույքը, այդ թվում՝ գրադարանային ֆոնդերը՝ համաձայն «Լուծարվող «Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի գույքագրման և գույքի հանձնման-ընդունման ակտի»: Էկոնոմիկայի նախարարության և ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության (UNIDO) հետ համատեղ ստորագրված՝ Հայաստանում 2022-2026 թվականների ներառական և կայուն արդյունաբերական զարգացման «Երկրի ծրագրային փաստաթղթի» շրջանակում UNIDO-ի գործառնական կոմիտեն հաստատել է «Փոքր և միջին ձեռնարկությունների կարողությունների զարգացում՝ Հայաստանում արդյունաբերական նորարարական կենտրոնի ստեղծման ուղղությամբ» նախագիծը: Ներկայումս քննարկվում է վերոնշյալ նախագծի իրականացման ճանապարհային քարտեզը:		
		4.2 Մասնավոր հատվածի մասնագիտական կարողությունների զարգացում		Վարչապետի հավանությամբ որոշում է կայացվել 4.2 կետով նախատեսված միջոցառումը չիրականացնել: Այդ հիմքով 2024 և 2025 թվականներին նախատեսված բյուջետային միջոցները վերաբաշխվել են և ուղղվել ՀՀ էկոնոմիկայի նախարարության առաջնահերթ ծրագրերին, իսկ 2026 թվականի համար բյուջետային միջոցներ նախատեսված չեն:	

		4.3 Պետություն-մասնավոր երկխոսության պետական ծրագրի հաստատում և իրագործում	**4.3.3**. ***Կազմակերպել տարեկան առնվազն 1 բարձր մակարդակի պետություն մասնավոր երկխոսության աշխատաժողով*** ***ՊՄԵ շրջանակում իրականացվել են՝*** 1. 2025 թվականի սեպտեմբերի 18–ին և 19-ին կայացել է «Դարպաս դեպի Եվրոպա»՝ (Gateway to EU) միջոցառումը, Հայաստանը նորարարության և ներդրումների նոր կենտրոն խորագրով միջազգային համաժողով՝ նվիրված ՀՀ տնտեսության զարգացմանը, որը համախմբել է հայկական և եվրոպական հրեշտակ ներդրողներին, ստարտափների հիմնադիրներին, նորարական և տեխնոլոգիական ոլորտների մասնագետներին: Միջոցառմանը մասնակցել են 15 երկրից՝ ժամանած ավելի քան 40 ներդրողներ: Տեղի է ունեցել 6 պանելային քննարկում, 3 կլոր սեղան: Քննարկվել են կին ձեռներեցների, սփյուռքի ներդրումների, պետություն-մասնավոր ֆոնդերի, ստարտափ էկոհամակարգի զարգացմանը վերաբերող արդիական հարցեր: 2. 2025 թվականին կայացել է ՓՄՁ զարգացման խորհրդի բարձր մակարդակի 4 նիստ՝ ՀՀ փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի նախագահությամբ: Նիստերի ընթացքում քննարկվել են խորհրդի շրջանակում շրջանառվող ավելի քան 20 հարց:		

		4.4 Ֆինանսների հասանելիության ապահովում, ՓՄՁ ներդրումային ֆոնդի և զարգացման բանկի հայեցակարգի հաստատում, հաստատման դեպքում իրագործում	4.4.1 ***Միջոցառման իրականացումը ապահովելու նպատակով*** Էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի փետրվարի 1-ի №281 հրամանով հաստատվել է Նորարարական նախաձեռնությունների հայեցակարգ:	Միաժամանակ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից մշակվել և սահմանված ընթացակարգով ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացրել «Նորարարության և ձեռներեցության հաբ» հիմնադրամ ստեղծելու մասին» Կառավարության որոշման նախագիծը: Նախագիծը քննարկվել է 2024 թվականի նոյեմբերի 5-ին կայացած Ֆինանսատնտեսական նախարարական կոմիտեի նիստի օրակարգի շրջանակում: Քննարկման արդյունքներով (ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՈԿԱ/338-2024) որոշվել է հիմնադրամի ստեղծմանը անդրադառնալ Հայաստանի ձեռներեցության զարգացման 2025-2030թթ. ռազմավարական ծրագրի (Հայաստանի ՓՄՁ մրցունակության 2026-2030թթ. ռազմավարական ծրագիր) հաստատումից հետո:	
5	Արտահանման խթանում Ապրանքների և ծառայությունների արտահանում/ՀՆԱ՝ 60%	5.1 «ՀՀ արտահանման ռազմավարության և կից ճանապարհային քարտեզի մշակում և իրականացում»	2025թ. մայիսի 17-ին և և մայիսի 27-ին «Հայաստանի արտահանման 2025-2030 թվականների ռազմավարական ծրագիր» նախագիծը և գործողությունների ծրագիրը ներկայացվել է ՀՀ փոխվարչապետ Մհեր Գրիգորյանին: Լրամշակված նախագիծը Ֆինանսատնտեսական նախարարական կոմիտեի նիստի ընթացքում հաստատվել է պայմանով: Նախագիծը և գործողությունների ծրագիրը 2025թ. հունիսի 24-ին ներկայացվել է ՀՀ վարչապետին: Նախագծի և գործողությունների ծրագրի վերաբերյալ մի քանի դիտարկումների լրամշակման		

			արդյունքում 2025թ. հուլիսի 31-ին Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ընդունվել է «Հայաստանի Հանրապետության արտահանման խթանման 2025-2030 թվականների ռազմավարական ծրագիրը և դրա կատարումն ապահովող գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» N 1068-Լ որոշումը: 2025 թվականին իրականացվել են հետևյալ գործողությունները. 1. Հավաքագրվել, ուսումնասիրվել և վերլուծվել է առանցքային ապրանքային ուղղություններին առնչվող միջազգային ցուցահանդեսների վերաբերյալ տեղեկատվությունը: Արդյունքում ձևավորվել և վերջնականացվել է միջազգային ցուցահանդեսների ամբողջական և համակարգված ցուցակ: 2. Քարտեզագրվել է առանցքային ապրանքների արտադրության մեջ ներգրավված տեղական խոշոր կազմակերպությունների վերաբերյալ տեղեկատվությունը: 3. Կազմակերպվել և համակարգվել է հայկական ընկերությունների մասնակցությունը ազգային տաղավարով 13 միջազգային ցուցահանդեսների և էքսպոների, որոնց ընթացքում հատուկ ուշադրություն է դարձվել բիզնեսը-բիզնեսին (B2B) շփումների արդյունավետ կազմակերպմանը, 4. Մեկնարկել են բանակցություններ Իփսոս շուկայի հետազոտական և խորհրդատվական համաշխարհային ընկերության հետ՝ ՀՀ-ն Անհոլտ-Իփսոսի Ազգային բրենդի ինդեքսի շրջանակում ներառելու նպատակով:		

			5. Մեկնարկել է առևտրական ներկայացուցիչների կանոնադրության փոփոխությունների իրականացման գործընթացը: 6. Քարտեզագրվել են արտերկրում Հայաստանի Հանրապետությանը պատկանող պետական գույքերը, գնահատվել են դրանց օգտագործման հնարավորություններն ու պոտենցիալը՝ դրանց արդյունավետ օգտագործման ծրագրեր մշակելու նպատակով, 7. Առևտրատնտեսական հարաբերությունների շրջանակի ընդլայնման նպատակով կազմակերպվել են մի շարք գործարար համաժողովներ, ինչպես նաև միջկառավարական հանձնաժողովների ընթացքում քննարկվել են առևտրաշրջանառության ընդլայնման հնարավորությունները, ձեռք են բերվել պայմանավորվածություններ համագործակցության խորացման նպատակով: 8. Իրականացվել են արտահանման խորհրդի կազմավորման համար անհրաժեշտ աշխատանքները:		
		5.2 Ներդրումների և արտահանման խթանման ծրագրի Հայաստանի Հանրապետության արտահանմանն ուղղված արդյունաբերության պետական աջակցության 2021-2026 թթ. միջոցառումների իրականացում, «Ներդրումների և արտահանման խթանման ծրագրի 2022թ. միջոցառումները	2025թ. ընթացքում ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից կազմակերպվել և համակարգվել է հայկական ընկերությունների մասնակցությունը ազգային տաղավարով 13 միջազգային ցուցահանդեսների և էքսպոների, որոնց ընթացքում հատուկ ուշադրություն է դարձվել բիզնեսը-բիզնեսին (B2B) շփումների արդյունավետ կազմակերպմանը (ԳԴՀ, ԱՄԷ, ՉԺՀ, Ֆրանսիայի Հանրապետություն, ՌԴ, Իրաքի Հանրապետություն, Միացյալ Թագավորություն, Իտալիա): Միջազգային ցուցահանդեսներին ընդհանուր առմամբ		

		հաստատելու մասին» ՀՀ էկոնոմիկայի նախարարի հրամանի հաստատում	ներկայացվել է 152 հայկական ընկերության արտադրանք. կայացել են 400-ից ավել B2B ձևաչափով հանդիպումներ և քննարկումներ օտարերկրյա գնորդների և դիստրիբյուտորների հետ, 7 գործարար համաժողով, որոնց մասնակցել են ավելի քան 600 հայ և օտարերկրյա գործարարներ: 7 գործարար համաժողովներն են. 1. Հայաստան-Վրաստան 2. Հայաստան-Իրաք 3. Հայաստան-Իրան 4. Հայաստան-Հնդկաստան 5. Հայաստան-Ղազախստան 6. Հայաստան-Գերմանիա 7. Հայաստան-Եգիպտոս		
		5.4 Մաքսասակագնային, ոչ սակագնային կարգավորման ոլորտի վերաբերյալ իրավասու մարմիններին առաջարկությունների ներկայացում	Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է ԵԱՏՄ համագործակցության շրջանակներում սակագնային և ոչ սակագնային կարգավորման ոլորտում իրականացվող միջոցառումների մշակմամբ և համակարգմամբ, ԵԱՏՄ չափանիշներին համապատասխանեցմամբ: Միջոցառման իրականացման նպատակն է ՀՀ տնտեսվարող սուբյեկտների համար արտահանման և ներմուծման գործընթացների դյուրացումը, բարենպաստ պայմանների ապահովումը, ինչպես նաև արտադրական հզորությունների ավելացումը: Վերոնշյալ միջոցառման շրջանակներում ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից իրականացվել են մի շարք միջոցառումներ, մասնավորապես. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Խորհրդի 2023 թվականի		

			նոյեմբերի 24-ի N134 որոշման դրույթներին համապատասխան՝ ՀՀ կառավարության կողմից հաստատվել են. - ՀՀ կառավարության 2024 թվականի նոյեմբերի 28-ի «2025 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8703 80 000 2 ծածկագրին դասվող էլեկտրաշարժիչով շարժիչային տրանսպորտային միջոցների նկատմամբ սակագնային արտոնություն կիրառելու և ներմուծման ընթացակարգը հաստատելու մասին» N 1876-Ն որոշումը, որով կապահովվի՝ Հայաստանի Հանրապետությանը 2025 թվականի համար հատկացված սակագնային արտոնության շրջանակներում 8000 հատ քանակով տրանսպորտային միջոցի ներմուծումը մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափի կիրառմամբ, որից 5000 հատից ոչ ավելի քանակով՝ ներմուծումը թույլատրվում է ֆիզիկական անձանց, ինչպես նաև անհատ ձեռնարկատերերին և իրավաբանական անձանց, որոնք չունեն անմիջապես ավտոարտադրողի հետ կնքված դիլերական - դիստրիբյուտորական պայմանագիր և 3000 հատից ոչ ավելի քանակով՝ անմիջապես ավտոարտադրողի հետ կնքված դիլերական - դիստրիբյուտորական պայմանագրի /համաձայնագրի/ շրջանակներում ներմուծում իրականացնող սուբյեկտներին: - ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից մշակվել և ներկայումս ՀՀ կառավարության հաստատմանն է ներկայացվել՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի նոյեմբերի 28-ի № 1876-Ն որոշման մեջ լրացումներ		

			կատարելու մասին» որոշման նախագիծը, համաձայն որի՝ 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, դիլերական-դիստրիբյուտորական պայմանագրի (համաձայնագրի) շրջանակներում ներմուծում իրականացնող շահառուների կողմից չներմուծված քանակի չափով՝ կիրառելով ժամանակագրական սկզբունքը, հերթականությունը, իրականացնել վճարված ներմուծման մաքսատուրքի վերադարձ, այն ֆիզիկական անձանց, ինչպես նաև անհատ ձեռնարկատերերին և իրավաբանական անձանց, ովքեր N 1876-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված 5000 հատ չափաքանակը սպառվելուց հետո իրականացրել են ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8703 80 000 2 ծածկագրին դասվող էլեկտրաշարժիչով շարժիչային տրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպում և կատարել են համապատասխան վճարումները: Արտոնության վերականգնումը չձևակերպված քանակի չափով կիրականացվի ըստ ժամանակագրական սկզբունքի հաջորդականության (սկսած առավել վաղ ձևակերպվածից)՝ մաքսային հայտարարագրի և (կամ) մաքսային մուտքի օրդերի գրանցման օրվա, ժամի, րոպեի հերթականությամբ: - Ս. թ դեկտեմբերի 11-ին կայացած Եվրասիական միջկառավարական խորհրդի նիստում ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ Հայաստանի Հանրապետությանը 2026 թվականի համար հատկացվել է ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8703 80 000 3 և 8703 80 000 5 ծածկագրին դասվող էլեկտրաշարժիչով շարժիչային տրանսպորտային միջոցների ներմուծման		

			սակագնային քվոտա՝ 15.0 հազ. հատ քանակով, որի շրջանակներում նախատեսվում է կիրառել ներմուծման մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափ: Ներկայումս ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից համապատասխան շահագրգիռ պետական մարմինների հետ համաձայնեցման փուլում է գտնվում «Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8703 80 000 3 և 8703 80 000 5 ծածկագրերին դասվող էլեկտրաշարժիչով շարժիչային տրանսպորտային միջոցների նկատմամբ 2026 թվականի ընթացքում սակագնային արտոնություն կիրառելու և ներմուծման ընթացակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը, որը սահմանված կարգով կներկայացվի ՀՀ կառավարություն: - ՀՀ կառավարության կողմից հաստատվել է 2025 թվականի մայիսի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 19-ի N 2036-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» N 567-Ն որոշումը, որի ընդունումը պայմանավորված էր Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2024 թվականի նոյեմբերի 29-ի N 106 որոշման դրույթներին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետությանը հատկացված՝ 2000.0 տոննայի չափով սերուցքային կարագի ներմուծման թույլատրելի ծավալի ամբողջ քանակը սպառելու անհրաժեշտությամբ: Որոշման մեջ նախատեսվել են դրույթներ՝ համաձայն որոնց տնտեսվարող սուբյեկտներն իրավունք են ստանում հրաժարվելու իրենց		

			հատկացված ծավալից՝ ամբողջությամբ կամ մասնակի, մասնավորապես սահմանվել է՝ սերուցքային կարագի ներմուծման թույլատրելի ծավալի բաշխման նոր փուլ՝ այլ տնտեսվարողների միջև առկա մնացորդի ծավալը բաշխելու նպատակով: - Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Խորհրդի 2025 թվականի հունվարի 22-ի «Մաքսային միության հանձնաժողովի որոշ որոշումների մեջ կարտոֆիլի սերմացուի մասով փոփոխություններ կատարելու մասին» N2 որոշման դրույթներին համապատասխան ՀՀ կառավարության կողմից հաստատվել են՝ - 2025 թվականի փետրվարի 20-ի «Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող կարտոֆիլի սերմացուի նկատմամբ սակագնային արտոնություն կիրառելու, ներմուծման բաշխման կարգը, մեկանգամյա և գլխավոր լիցենզիաների ձևերը հաստատելու մասին» N183-Ն որոշումը, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետությանը հատկացվել է 3,5 հազ. տոննա ծավալով ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 0701 10 000 0 ծածկագրին դասվող «E» դասի (էլիտային) և «A» դասի (առաջին վերարտադրության) կարտոֆիլի սերմացուի Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծման /0 % մաքսատուրքի դրույքաչափ/ նկատմամբ սակագնային արտոնություն: - 2025 թվականի ապրիլի 23-ի «Հայաստանի Հանրապետության տարածք կառավարության 2025 թվականի փետրվարի 20-ի N183-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N462-Ն որոշումը, որի ընդունումը պայմանավորված էր կարտոֆիլի		

			սերմացուի Հայաստանի Հանրապետություն ներմուծման թույլատրելի ծավալի չբաշխված քանակության երկրորդ փուլի իրականացման անհրաժեշտությամբ: Վերոնշյալ միջոցառումների իրականացումն ուղղված է ՀՀ գյուղատնտեսությանը կարտոֆիլի որակյալ տնկանյութով ապահովմանը: Կարտոֆիլի բարձր բերքատվությունը պայմանավորող հիմնական գործոններից մեկը բարձրորակ տնկանյութն է և հաշվի առնելով հանրապետությունում կարտոֆիլի միջին բերքատվության բարձրացման անհրաժեշտությունը, խիստ կարևոր է հանրապետությունում կարտոֆիլի բարձորակ տնկանյութի հասանելիության ապահովումը: - ՀՀ կառավարության կողմից հաստատվել է 2025 թվականի հուլիսի 3-ի «Հայաստանի Հանրապետության տարածք սահմանափակման ենթակա ապրանքների ներմուծման թույլատրելի ծավալի բաշխման ընթացակարգը, մեկանգամյա և գլխավոր լիցենզիաների ձևերը սահմանելու մասին» N 904-Ն որոշումը, ինչը թույլ կտա միասնական մոտեցում ունենալ այն ապրանքների բաշխման նկատմամբ, որոնց հանդեպ Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշումներով սահմանվել են ներմուծման թույլատրելի ծավալներ կամ ներմուծման առանձնահատկություններ: Անհրաժեշտության դեպքերում հնարավոր է ընթացակարգում որոշակի տարբերակված մոտեցում սահմանել Հայաստանի Հանրապետության կառավարության առանձին որոշումներով:		

			- 2025 թվականի մայիսի 15-ից ուժի մեջ է մտել «Եվրասիական տնտեսական միության ու դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Իրանի Իսլամական Հանրապետության՝ մյուս կողմից, միջև ազատ առևտրի մասին» համաձայնագիրը: Համաձայնագրի անբաժանելի մաս են հանդիսանում կից ցանկերը, որոնց մեջ ներառված ապրանքատեսակների հանդեպ Կողմերը տրամադրում են սակագնային արտոնություններ: Համաձայնագիրը նախատեսում է նաև մի շարք գյուղատնտեսական ապրանքների համար արտոնություն սակագնային քվոտայի տեսքով՝ ապրանքների որոշակի քանակության համար: Նշված ցանկերը հաստատվել են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2025 թվականի մարտի 11-ի N 27 որոշմամբ, որի կիրարկումն ապահովելու նպատակով՝ ՀՀ կառավարության կողմից հաստատվել է 2025 թվականի հուլիսի 3-ի «2025 թվականի ընթացքում Իրանի Իսլամական Հանրապետությունից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող իրանական ծագում ունեցող առանձին տեսակի ապրանքների նկատմամբ սակագնային քվոտա կիրառելու, ներմուծման թույլատրելի ծավալի բաշխման ընթացակարգը սահմանելու, մեկանգամյա և գլխավոր լիցենզիաների ձևերը հաստատելու և ներմուծման լիցենզիայի գործողության ժամկետ սահմանելու մասին» N905-Ն որոշումը, որը սահմանում է արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների միջև սակագնային քվոտայի շրջանակներում առանձին տեսակի գյուղատնտեսական		

			ապրանքների (ընտանի թռչունների միս և սննդային ենթամթերք, կարտոֆիլ, լոլիկ, կաղամբ գլուխ, ծաղկակաղամբ, շաղգամակաղամբ, տերևակաղամբ, գազար, շաղգամ, ճակնդեղ սեղանի, քոշմորուք, նեխուր արմատային, ամսական բողկ, վարունգներ և մանրավարունգներ, խնձոր և լոլիկներ՝ պատրաստված կամ պահածոյացված) Իրանի Իսլամական Հանրապետությունից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծման ծավալների բաշխման կարգը: Հարկ է նշել, որ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2025 թվականի նոյեմբերի 26-ի N 110 որոշմամբ հաստատվել են Իրանի Իսլամական Հանրապետությունից ծագող և Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների տարածքներ ներմուծվող ապրանքների առանձին տեսակների սակագնային քվոտաների ծավալները՝ 2026 թվականի 2027 թվականի համար: Նշյալ որոշման դրույթներին համապատասխան՝ ներկայումս ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից շրջանառման փուլում է գտնվում 2026 թվականի համար Հայաստանի Հանրապետությանը տրամադրված սակագնային քվոտաների ծավալների բաշխման իրականացման որոշման նախագիծը: - ՀՀ Ազգային Ժողովի կողմից երկրորդ ընթերցմամբ հավանության է արժանացել՝ «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը, որով առաջարկվում է ավելացված արժեքի հարկից ազատման գործող արտոնությունը երկարաձգել ևս մեկ տարով՝		

			2026 թվականի հունվարի 1-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8702 40 000, 8703 80 000, 8704 60 000 և 8711 60 ծածկագրերին դասվող և 2023 թվականի դեկտեմբերի 31-ից հետո թողարկված՝ էլեկտրական շարժիչով տրանսպորտային միջոցների /մեծ, միջին և փոքր ավտոբուսներ, մարդատար մեքենաներ, բեռնատար մեքենաներ, մոտոցիկլետներ և մոպեդներ/ ներմուծման համար: Ընդ որում նշյալ տրանսպորտային միջոցների արտադրման տարեթվի մասով կիրառվող սահմանափակումը տարածվում է 2026 թվականի փետրվարի 1-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը ներմուծված տրանսպորտային միջոցների հանդեպ: Ներկայումս դեռևս 2019 թվականից, համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի՝ նշված էլեկտրական շարժիչով տրանսպորտային միջոցները /բացառությամբ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8704 60 000/ ազատված են ԱԱՀ-ից մինչև 2026 թվականի հունվարի 1-ը: Արդյունքում՝ աճել են էլեկտրական շարժիչով տրանսպորտային միջոցների Հայաստան ներմուծման ծավալները և էլեկտրական տրանսպորտային միջոցների օգտագործման հետագա զարգացումն ապահովելու նպատակով՝ նպատակահարմար է շարունակել տվյալ ոլորտում իրականացվող քաղաքականությունը՝ երկարաձգելով ԱԱՀ-ից ազատման ժամկետը ևս մեկ տարով: Նախագծի ընդունմամբ նպաստավոր պայմաններ կստեղծվեն երկրում էլեկտրական շարժիչով տրանսպորտային միջոցների ձեռքբերումն ու շահագործումը խթանելու, ինչպես նաև կանաչ տնտեսության		

			նպատակների իրականացման համար: Արտոնության կիրառումը կնպաստի նաև շահագործման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների (լիցքավորման կայաններ, վերանորոգման կետեր և այլն) զարգացմանը, այդ ոլորտում լրացուցիչ ներդրումների ներգրավմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ավտոպարկի թարմացմանը և էներգետիկ անվտանգությանը:		
		5.5 Ներքին շուկայի պաշտպանության և հակագնագցման միջոցների կիրառման քաղաքականության մշակում	Եվրասիական տնտեսական միությանն անդամակցության շրջանակներում ԵԱՏՄ անդամ պետությունները, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունն իրականացնում են ներքին շուկայի պաշտպանության և հակագնագցման միջոցների կիրառման միասնական քաղաքականություն: Միաժամանակ, ներքին շուկայի պաշտպանության և հակագնագցման միջոցների մասով հետաքննության վարումը և որոշումների ընդունումը վերապահված է Եվրասիական տնտեսական հանձնաժողովին: Վերոնշյալ միջոցառման շրջանակներում ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից իրականացվել են մի շարք միջոցառումներ. - Հիմք ընդունելով «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետը, ինչպես նաև համաձայն 2014 թվականի մայիսի 29-ի Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի 47-րդ հոդվածի և «Երրորդ երկրների հանդեպ ոչ սակագնային կարգավորման միջոցների մասին» արձանագրության՝ Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության		

			և տնտեսության կայունացման ապահովման նպատակով՝ ՀՀ կառավարության կողմից ընդունվել են մի շարք որոշումներ, համաձայն որոնց սահմանափակվել կամ արգելվել է Հայաստանի Հանրապետության տարածքից որոշ տեսակի ապրանքների արտահանումը կամ ներմուծումը, մասնավորապես՝ - ՀՀ կառավարության կողմից հաստատվել է 2025 թվականի հունիսի 26-ի «Հայաստանի Հանրապետությունից Եվրասիական տնտեսական միության անդամ չհանդիսացող երկրներ մի շարք ապրանքների արտահանման ժամանակավոր արգելք կիրառելու մասին» N833 -Ն որոշումը, որով սահմանվել է արտահանման ժամանակավոր արգելք՝ (6 ամիս ժամկետով) Հայաստանի Հանրապետությունից մի շարք գյուղատնտեսական արտադրատեսակների ցորեն, մեսլին, գարի, եգիպտացորեն, հնդկացորեն, արևածաղկի սերմ, արևածաղկի ձեթ ապրանքների նկատմամբ, 2025 թվականի հուլիսի 5-ից մինչև 2026 թվականի հունվարի 5-ը ներառյալ: Միաժամանակ, նշենք, որ ներկայումս ՀՀ կառավարության հաստատմանն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետությունից Եվրասիական տնտեսական միության անդամ չհանդիսացող երկրներ մի շարք ապրանքների արտահանման ժամանակավոր արգելք կիրառելու մասին» որոշման նախագիծը, որով նախատեսվում է երկարաձգել ՀՀ կառավարության 2025 թվականի հունիսի 26-ի N833 -Ն որոշմամբ սահմանված արտահանման ժամանակավոր արգելքը՝ /6 ամիս ժամկետով/ 2026 թվականի հունվարի 6-ից մինչև 2026 թվականի հուլիսի 6-ը ներառյալ: - Ավտոտրանսպորտային միջոցների՝ սարքին վիճակում գտնվող չեզոքացման համակարգի ապամոնտաժման, առանց չեզոքացման համակարգի և դրա անսարք վիճակում ավտոտրանսպորտային միջոցի շահագործման և ապօրինի շրջանառության		

			դեպքերը, ինչպես նաև մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետումների ծավալները նվազեցնելու ուղղությամբ իրականացվել են մի շարք միջոցառումներ, մասնավորապես. - ՀՀ կառավարության կողմից հաստատվել է 2025 թվականի հունիսի 20-ի «Հայաստանի Հանրապետության տարածքից ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 7112 99 000 0 ծածկագրին դասվող ավտոմեքենաների խլացուցիչների օգտագործված կատալիզատորների կերամիկական թափոնների արտահանման ժամանակավոր արգելք կիրառելու մասին» N806-Ն որոշումը, որով ժամանակավոր (6 ամիս ժամկետով) արգելք է սահմանվել ավտոմեքենաների խլացուցիչների օգտագործված կատալիզատորների կերամիկական թափոնների արտահանման նկատմամբ (արգելքը գործում է մինչև 2026 թվականի հունվարի 4-ը ներառյալ): - ՀՀ կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 11-ի «Հայաստանի Հանրապետության տարածքից ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 7112 99 000 0 ծածկագրին դասվող ավտոմեքենաների խլացուցիչների օգտագործված կատալիզատորների կերամիկական թափոնների արտահանման ժամանակավոր արգելք կիրառելու մասին» N 1797-Ն որոշմամբ ևս 6 ամիս ժամկետով / 2026 թվականի հունվարի 5-ից մինչև 2026 թվականի հուլիսի 5-ը ներառյալ/ երկարաձգվել է ավտոմեքենաների խլացուցիչների օգտագործված կատալիզատորների կերամիկական թափոնների արտահանման արգելքը: - Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Կոլեգիայի 2025 թվականի հոկտեմբերի 14-ի N 96 որոշման 5-րդ կետին համապատասխան Հայաստանի Հանրապետության համար սահմանվել է հակագնագցման տուրքի վճարումից ազատում		

			Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող Չինաստանի Ժողովրդական Հանրապետության ծագում ունեցող և ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 3206 11 000 0 ծածկագրին դասվող չոր նյութի վերահաշվարկով 80 զանգվ.% կամ ավելի տիտանի երկօքսիդ պարունակող գունանյութերի և պատրաստուկների համար՝ տարեկան 250 տոննա ծավալով: Վերոնշյալ արտոնությունը գործելու է 5 տարի ժամկետով, որի հիման վրա մշակվել և ներկայումս ՀՀ կառավարության հաստատմանն է ներկայացվել «Չինաստանի Ժողովրդական Հանրապետության ծագում ունեցող ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 3206 11 000 0 ծածկագրին դասվող չոր նյութի վերահաշվարկով 80 զանգվ.% կամ ավելի տիտանի երկօքսիդ պարունակող գունանյութերի և պատրաստուկների՝ առանց հակագնագցման տուրքի վճարման Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծման ընթացակարգը հաստատելու մասին» որոշման նախագիծը: Որոշումն ուժի մեջ մտնելուց հետո կսահմանվի հակագնագցման տուրքի վճարումից ազատում՝ տարեկան 250 տոննա ծավալով, Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող Չինաստանի Ժողովրդական Հանրապետության ծագում ունեցող և ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 3206 11 000 0 ծածկագրին դասվող չոր նյութի վերահաշվարկով 80 զանգվ.% կամ ավելի տիտանի երկօքսիդ պարունակող գունանյութերի և պատրաստուկների համար: - Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Խորհրդի 2025 թվականի դեկտեմբերի 11-ի « Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2025 թվականի նոյեմբերի 17-ի № 101 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» № 7 որոշմամբ Հայաստանի Հանրապետության համար սահմանվել է հակագնագցման տուրքի վճարումից ազատում՝ Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող Չինաստանի Ժողովրդական Հանրապետության ծագում ունեցող և ԵԱՏՄ ԱՏԳ		

			ԱԱ 8545 11 002 0 ծածկագրին դասվող վառարաններում օգտագործվող գրաֆիտացված էլեկտրոդներ ապրանքատեսակների համար՝ տարեկան 700 տոննա ծավալով: Վերոնշյալ արտոնությունը գործելու է 5 տարի ժամկետով: Նշյալ որոշման կիրարկումն ապահովելու նպատակով՝ ներկայումս Էկոնոմիկայի նախարարության կողմից մշակվում է համապատասխան որոշման նախագիծ, համաձայն որի հակագնագցման տուրքից ազատումը տրամադրվելու է՝ 2015 թվականի մարտի 10-ի ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող առանձին ապրանքների նպատակային նշանակությունը հաստատող և որոշ ապրանքների նկատմամբ մաքսատուրքի վճարման արտոնություններ տրամադրող Հայաստանի Հանրապետության լիազոր պետական կառավարման մարմիններ սահմանելու և Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող առանձին ապրանքների նպատակային նշանակությունը հաստատող եզրակացության տրամադրման կարգը հաստատելու մասին» N 228-Ն որոշմամբ սահմանված՝ Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող առանձին ապրանքների նպատակային նշանակությունը հաստատող եզրակացության առկայության պարագայում:		

6	Միջազգային առևտրատնտեսական համագործակցության ընդլայնում և խորացում	6.1 ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի իրականացում, ՀՀ-ԵՄ առևտրատնտեսական համագործակցության ապահովում	Կատարված է: • 2025թ. հունիսի 17-18-ը Երևանում տեղի է ունեցել ՀՀ-ԵՄ Առևտրի հարցերով գործընկերության կոմիտեի 7-րդ նիստը: Նիստի ընթացքում քննարկվել են առևտրի և ներդրումների ոլորտներում վերջին զարգացումները, ԵՄ կողմից ՀՀ-ին տրամադրվող ոլորտային աջակցությունը, Համաձայնագրի 237-րդ հոդվածում ամրագրված պարտավորությունների իրականացումը, Աշխարհագրական նշումների պաշտպանության մասով իրավական կիրարկումը, ինչպես նաև ՀՀ-ԵՄ առևտրատնտեսական համագործակցությանն առնչվող այլ հարցեր: Ամփոփվել են Կոմիտեի ներքո գործող Աշխարհագրական նշումների և Մաքսային հարցերով ենթակոմիտեների նիստերի արդյունքները և ձեռք բերված պայմանավորվածությունները, ՀԸԳՀ Մաս VI-ի (առևտուր և առևտրին առնչվող հարցեր) գլուխների և դրանց համապատասխան 12 ճանապարհային քարտեզների իրականացման հարցերը: • 2025թ. հունիսի 17-ին Երևանում տեղի է ունեցել ՀՀ-ԵՄ Աշխարհագրական նշումների ենթակոմիտեի 6-րդ նիստը, որի ընթացքում քննարկվել են օրենսդրական բարեփոխումներին առնչվող հարցեր, ինչպես նաև իրականացվել է նոր գրանցված աշխարհագրական նշումների ցուցակների փոխանցում: • 2025թ. մայիսի 13-ին Բրյուսելում տեղի է ունեցել Մաքսային հարցերով ենթակոմիտեի 5-րդ նիստը: «Տեխնիկական աջակցություն հայկական բրենդիի աշխարհագրական նշման (GI) ստեղծման համար» ԵՄ ծրագրի		

			շրջանակներում կատարվել է ապագա աշխարհագրական նշումով (ԱՆ) «Հայկական բրենդի»-ի արտադրական տարածքների համար գոտիների գոտիավորում և քարտեզագրում, ՀՀ օրենսդրության վերլուծություն՝ գնահատելով դրա համապատասխանությունը ԵՄ կանոնակարգերին, իրականացվել է «Հայկական բրենդի» ԱՆ համար հնարավոր արտահանման ճուկաների նախնական նույնականացում, մշակվել են «Հայկական բրենդի» ԱՆ արտադրանքի տեխնիկական հատկորոշումները և հսկողության պլանը, որոնք առաջիկայում կներկայացվեն պետական գրանցման:		
		6.2 ԵՄ Արևելյան գործընկերության շրջանակներում երկկողմ և բազմակողմ ձևաչափով համագործակցության ապահովում, ԵՄ ֆինանսավորմամբ ծրագրերի իրականացում	Կատարված է: **Վարկային երաշխիքի ծրագիր** Վարկային երաշխիքի մեխանիզմի կոնցեպտը մշակվել է Համաշխարհային բանկի կողմից՝ ԵՄ-ի հետ համակարգմամբ: Քննարկումների արդյունքում արձանագրվել են կառավարման, ռիսկերի բաշխման և կիրառման հետ կապված ռիսկեր, ինչի հիման վրա կարևորվել է մեխանիզմի ներդրումը կապել համապատասխան ինստիտուցիոնալ կարողությունների ձևավորման հետ: Այս մոտեցմամբ ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից մշակվել է Հայաստանի ՓՄՁ մրցունակության 2026–2030թթ. ռազմավարական ծրագիրը, որը նախատեսում է վարկային երաշխիքի մեխանիզմի փուլային ներդրում՝ ՓՄՁ-ների ֆինանսների հասանելիության բարելավման նպատակով: Ռազմավարական ծրագիրը ներկայացվել է 2025թ. դեկտեմբերի 16-ին կայացած ՓՄՁ զարգացման խորհրդի նիստում: **Արտահանման դիվերսիֆիկացիայի աջակցման ծրագիր** Արտահանման դիվերսիֆիկացիայի աջակցման ծրագիրը իրականացվում է ՎԶԵԲ-ի		

			աջակցությամբ՝ ՀՀ արտահանման ռազմավարության մշակման նպատակով: Ծրագրի շրջանակում ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում ներգրավվել են երկու փորձագետներ: Ծրագրի արդյունքում ընդունվել է ՀՀ կառավարության 2025թ. հուլիսի 31-ի N 1068-Լ որոշումը՝ «Հայաստանի Հանրապետության արտահանման խթանման 2025–2030 թթ. ռազմավարական ծրագիրը և գործողությունների ծրագիրը հաստատելու մասին»: Ծրագիրը ավարտվել է 2025թ. սեպտեմբերի 30-ին: **Կորպորատիվ պարտատոմսերի թողարկման ծրագիր/Կապիտալի շուկայի զարգացման աջակցության ծրագիր** ՎԶԵԲ-ի կողմից մշակված և ԵՄ ֆինանսավորմամբ հաստատված տեխնիկական առաջադրանքի հիման վրա ծրագիրը մեկնարկել է 2024թ. դեկտեմբերի 11-ին: Խորհրդատուներ են ընտրվել Galt & Taggart և Ameriabank ընկերությունները: Ծրագրի իրականացման համար ստեղծվել է վեբ կայք՝ https://cms-armenia.ebrd.com/subscriber: Ծրագրի շրջանակում իրականացվել են կարողությունների զարգացման միջոցառումներ, վեբինարներ և կոնֆերանսներ,իսկ հայտերի գնահատման միջգերատեսչական հանձնաժողովի առաջին նիստը կայացել է 2025թ. դեկտեմբերի 9-ին: **Որակի ենթակառուցվածքի համակարգի արդիականացում** ԵՄ տնտեսական և ներդրումային ծրագրի շրջանակում ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից մշակվել է ՀՀ որակի ենթակառուցվածքի զարգացման		

			ռազմավարական ծրագիր՝ ուղղված հավատարմագրման, ստանդարտացման և չափագիտության ոլորտների զարգացմանը, որի շրջանակում ներկայացվել է ներդրումային ծրագիր, որի բյուջեն կազմում է շուրջ 8,6 մլն եվրո: Ռազմավարական ծրագրի լրամշակված տարբերակը ներկայացվել է ՀՀ փոխվարչապետ Միեր Գրիգորյանի գրասենյակ՝ ԵՄ պատվիրակությանը փոխանցելու նպատակով: ԵՄ ֆինանսավորմամբ իրականացվող ՏՀՋԿ–ԱՄԿ համատեղ ծրագիրը մեկնարկել է 2025թ. նոյեմբերի 13-ին: Ծրագրի նպատակն է աջակցել Արևելյան գործընկերության երկրներում մրցունակության, գործարար միջավայրի բարելավման, թվայնացման և ՓՄՁ-ների միջազգայնացմանն ուղղված բարեփոխումներին: Ծրագրի նախնական փուլում նախատեսվում է իրականացնել 2025–2026թթ. Արևելյան Եվրոպայի և Հարավային Կովկասի երկրների մրցունակության հեռանկարի առաջին գնահատումը:		
		6.3 ԱՀԿ հետ համագործակցության խորացում և ընդլայնում, ԱՀԿ անդամակցության շրջանակներում ՀՀ ստանձնած պարտավորությունների կատարում	Կատարված է: • Առևտրային քաղաքականության թափանցիկության և կանխատեսելիության ապահովման նպատակով 2025թ. ընթացքում, որպես Հայաստանի Հանրապետության ծանուցումների պատասխանատու մարմին՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից ԱՀԿ քարտուղարություն է ներկայացվել ՀՀ առևտրային քաղաքականությանն ու կիրառվող միջոցներին առնչվող՝ ԱՀԿ համաձայնագրերով սահմանված ավելի քան 35 ծանուցումներ: • Իրականացվել է ԱՀԿ անդամ երկրներից ԱՀԿ-ի Քարտուղարության միջոցով շրջանառված՝ երկրների առևտրատնտեսական ոլորտի կարգավորմանն առնչվող միջոցների		

			վերաբերյալ ՀՀ համար հետաքրքրություն ներկայացնող ավելի քան 200 ծանուցումների ուսումնասիրություն, դասակարգում և ներկայացում ՀՀ շահագրգիռ մարմիններին: • ԱՀԿ քարտուղարության հետ իրականացված աշխատանքների արդյունքում՝ ԱՀԿ քարտուղարության Ապրանքների առևտրի խորհրդի 2025թ. նոյեմբերի 27-ի նիստի որոշմամբ ՀՀ կողմից ստանձնած մաքսատուրքերի սահմանային ամրագրված դրույքաչափերի պարտավորությունների վերաբանակցման բանակցությունների ավարտի վերջնաժամկետը երկարաձգվել է մինչև 2027թ. հունվար: • Ձևավորվել են Հայաստանի Հանրապետության դիրքորոշումները ԱՀԿ տարբեր ոլորտային կոմիտեների նիստերի և այլ քննարկումների շրջանակներում, ապահովվել է մասնակցությունը մի շարք առցանց քննարկումներին: • Մասնակցություն է ապահովվել ս.թ. դեկտեմբերի 16-18-ը կայացած ԱՀԿ Գլխավոր խորհրդի նիստին, որտեղ քննարկվել են ԱՀԿ 14-րդ Նախարարական համաժողովում քննարկվելիք հարցերը, ԱՀԿ Քատուղարության շրջանակներում ընթացող ոլորտային բանակցությունների ընթացիկ վիճակը ու ԱՀԿ նոր ձևավորված համաձայնագրերին առնչվող մի շարք հարցեր: • ԱՀԿ-ում գործող նորմերին համապատասխանեցնելու նպատակով՝ փորձաքննության են ենթարկվել մի շարք միջազգային և ներպետական փաստաթղթերի և օրենսդրական փաթեթների նախագծերի, ԵԱՏՄ շրջանակներում երրորդ երկրների հետ բանակցվող համաձայնագրերի վերաբերյալ:		

			• Մասնակցություն է ապահովվել ԵՏՀ-ի կողմից կազմակերպված և ԱՀԿ-ին առնչվող հարցերով ավելի քան 30 տեսակոնֆերանսներին: • Ապահովվել է ԱՀԿ Պետական գնումների կոմիտեի նախագահի պաշտոնի համար մրցույթին ներկայացված թեկնածությունների՝ ՀՀ համար նախընտրելի թեկնածուի օգտին քվեարկելու համար անհրաժեշտ գործընթացը: Ապահովվել է հոկտեմբերի 28-ից 30-ը ՀՀ-ում գտնվող ԱՀԿ քարտուղարության պաշտոնյաների հետ համապատասխան աշխատանքների և հանդիպումների կազմակերպումը՝ Երևանի Պետական Համալսարանը որպես տարածաշրջանային ԱՀԿ աշխատաժողովների կենտրոնի ընտրության համար մրցույթի շրջանակներում:		
		6.4 Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման խնդիրներով պայմանավորված՝ առանձին ապրանքների արտահանման և (կամ) ներմուծման արգելման կամ քանակական սահմանափակումների ուղղությամբ քաղաքականության մշակում և իրականացում, քվոտաների համակարգի ներդրում	Միջոցառման իրականացման նպատակը երրորդ երկրներից Հայաստանի Հանրապետություն ներմուծման և Հայաստանի Հանրապետությունից արտահանման ժամանակ ՀՀ տնտեսվարող սուբյեկտների համար ազատ առևտրի համաձայնագրերով ամրագրված արտոնություններից օգտվելու հնարավորության ստեղծումն է, ինչպես նաև ներքին շուկայում տնտեսվարող սուբյեկտների շահերի պաշտպանությունը: Վերոնշյալ միջոցառման շրջանակներում ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից իրականացվել են մի շարք միջոցառումներ, մասնավորապես. - «Եվրասիական տնտեսական միության և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության միջև ազատ առևտրի մասին» համաձայնագրի շրջանակներում՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Կոլեգիայի 2025 թվականի սեպտեմբերի 23-ի N86 որոշման դրույթներին համապատասխան հաստատվել են 2026 թվականի համար Հայաստանի Հանրապետությանը տրամադրված սակագնային քվոտաների ծավալները: Վերջինիս կիրարկումն		

			ապահովելու նպատակով՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից մշակվել և ներկայումս ՀՀ կառավարության հաստատմանն է ներկայացվել՝ «2026 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության տարածք Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության ծագում ունեցող երկարահատիկ բրնձի նկատմամբ սակագնային քվոտա սահմանելու մասին» որոշման նախագիծը: Նշյալ որոշմամբ 2026 թվականի ընթացքում Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության ծագում ունեցող երկարահատիկ բրնձի առանձին տեսակների (ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 1006 30 670 1 և 1006 30 980 1) ներմուծումը Վիետնամի Սոցիալիստական Հանրապետությունից թույլատրվում է՝ 0 տոկոս ներմուծման մաքսատուրքի դրույքաչափի կիրառման պայմանով 250 տոննայից ոչ ավելի ծավալով: - «Եվրասիական տնտեսական միության և Սերբիայի Հանրապետության միջև ազատ առևտրի մասին» համաձայնագրի շրջանակներում՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Կոլեգիայի 2025 թվականի նոյեմբերի 26-ի N 109 որոշման դրույթներին համապատասխան՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից մշակվել և ներկայումս ՀՀ կառավարության հաստատմանն է ներկայացվել՝ «2026 թվականի ընթացքում Սերբիայի Հանրապետությունից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող սերբական ծագում ունեցող առանձին տեսակի ապրանքների նկատմամբ սակագնային քվոտա սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը, որով հաստատվել է արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների միջև 2026 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետություն ներմուծվող սերբական ծագման պանիր՝ 2.0 տոննա, թրմօղիներ՝ 5000 սպ. լիտր, ծխախոտ՝ 2000 հազ. հատ չափով ապրանքների՝ Սերբիայի Հանրապետությունից		

			Հայաստանի Հանրապետություն ներմուծման քվոտայի ծավալների բաշխման ընթացակարգը: - ՀՀ կառավարության կողմից հաստատվել է ՀՀ կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 4-ի ««Վերամշակում՝ մաքսային տարածքից դուրս» մաքսային ընթացակարգի կիրառմամբ Հայաստանի Հանրապետության տարածքից երրորդ երկրներ արտահանվող թանկարժեք մետաղների կամ թանկարժեք մետաղներով պատված մետաղների նկատմամբ քվոտա սահմանելու մասին» N 1764-Ն որոշումը, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետության կողմից միակողմանի կարգով սահմանվել են թանկարժեք մետաղների կամ թանկարժեք մետաղներով պատված մետաղների մաքսային տարածքից դուրս վերամշակման նպատակով արտահանման քանակական սահմանափակումներ՝ /ոչ սակագնային քվոտա/ 300 կգ - թանկարժեք մետաղների կամ թանկարժեք մետաղներով պատված մետաղների /ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 7108-ից, 7109 00 000 0, 7110 և 7111 00 000 0 ծածկագրերին դասվող/, 1250 կգ – արծաթ՝ չմշակված տեսքով /ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 7106-ից և 7107 00 000 0 /: - Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Կոլեգիայի 2025 թվականի հոկտեմբերի 7-ի N 89 դրույթներին համապատասխան՝ հաստատվել են 2026 թվականի համար Հայաստանի Հանրապետությանը տրամադրված առանձին տեսակի գյուղատնտեսական ապրանքների սակագնային քվոտաների ծավալները: Վերջինիս կիրարկումն ապահովելու նպատակով՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից մշակվել և ներկայումս ՀՀ կառավարության հաստատմանն է ներկայացվել՝ «Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող առանձին տեսակի գյուղատնտեսական ապրանքների նկատմամբ սակագնային քվոտա կիրառելու մասին» որոշման նախագիծը, համաձայն որի կիրականացվի՝ 2026 թվականի ընթացքում արտաքին տնտեսական		

			գործունեության մասնակիցների միջև ՀՀ տարածք ներմուծվող առանձին տեսակների գյուղատնտեսական ապրանքների (խոշոր եղջերավոր անասունների միս – 8.0 հազ. տոննա, խոզի միս – 13.0 հազ. տոննա, ընտանի թռչունների միս – 42.0 հազ. տոննա և կաթնային շիճուկ – 1.0 հազ. տոննա) Հայաստանի Հանրապետություն ներմուծման թույլատրելի ծավալի բաշխումը		
		6.5 Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ արտոնյալ առևտրային ռեժիմների առևտրատնտեսական համագործակցության ընդլայնում	ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից ապահովվում է ԵԱՏՄ շրջանակներում Հայաստանի՝ արտոնյալ առևտրային ռեժիմների կիրառման հնարավորությունների բանակցային գործընթացը երրորդ երկրների հետ առևտրի շրջանակներում. սակագնային և ոչ սակագնային արտոնությունների բանակցումը, համաձայնագրերի տեքստերի համաձայնեցումը, հաշվի առնելով ՀՀ տնտեսական շահերը և արտաքին շուկաներում ՀՀ արտադրանքի ներկայացվածության ապահովումը: 2025թ. ընթացքում շարունակական աշխատանքներ են տարվել ԵԱՏՄ շրջանակներում երրորդ երկրների հետ նախատեսվող և կնքված ազատ առևտրի, ինչպես նաև առևտրատնտեսական համագործակցության համաձայնագրերի շրջանակներում տվյալ երկրի շուկա՝ ՀՀ արտադրատեսակների մուտքի ազատականացման ուղղությամբ, մասնավորապես՝ - ԵԱՏՄ - ԻԻՀ «Եվրասիական տնտեսական միության ու դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Իրանի Իսլամական Հանրապետության՝ մյուս կողմից,		

			միջև ազատ առևտրի մասին» համաձայնագիրը ստորագրվել է 2023 թվականի դեկտեմբերի 25-ին Սանկտ Պետերբուրգում: Համաձայնագիրը ուժի մեջ է մտել 2025 թվականի մայիսի 15-ից: Համաձայնագիրը կարգավորում է տնտեսական համագործակցության հարցերի լայն շրջանակ, մասնավորապես՝ իրավական և հորիզոնական պարտավորությունները, փոխադարձ առևտրի դյուրացումն ու խթանումը, ներքին շուկայի պաշտպանությունը, մաքսային կարգավորումը, մրցակցությունը, սանիտարական և բուսասանիտարական միջոցառումները, առևտրում տեխնիկական խոչընդոտները, ծագման կանոնների որոշումը, վեճերի լուծումը, պետական գնումները և այլ բնագավառներին առնչվող խնդիրներ: Համաձայնագիրը նախատեսում է ապրանքների արտահանման և ներմուծման գործընթացների ժամանակ կիրառվող կանոնակարգերի թափանցիկություն, ինչպես նաև առևտրում պաշտպանիչ միջոցների կիրառման ժամանակ ԱՀԿ նորմերի ապահովում: Համաձայնագրով ամրագրված դրույթներով նախատեսվում է իրանական շուկա ապրանքների առավելագույն հնարավոր տեսականու համար առանց մաքսատուրքի մուտքի ապահովում, միաժամանակ ապահովելով Ժամանակավոր համաձայնագրում պարունակվող մուտքի պայմանների չվատթարացումը՝ ներմուծման մաքսատուրքերի վերացման վերաբերյալ պայմանավորվածությունների ձեռքբերման անհնարինության դեպքում: Համաձայնագրի անբաժանելի մաս են հանդիսանում նաև կից ցանկերը, որոնց մեջ ներառված ապրանքատեսակների հանդեպ Կողմերը պատրաստ են տրամադրել սակագնային արտոնություններ: 2025 թվականի սեպտեմբերի 24-ին կայացել է «Եվրասիական տնտեսական միության ու դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Իրանի		

			Իսլամական Հանրապետության՝ մյուս կողմից, միջև ազատ առևտրի մասին» համաձայնագրի իրագործման նպատակով հիմնված համատեղ կոմիտեի 1-ին նիստը, որի շրջանակներում քննարկվել են ԵԱՏՄ-ից և Իրանից ապրանքների շուկա մուտք գործելու, արտաքին էլեկտրոնային առևտրի կարգավորման, «Եվրասիական ագրոէքսպրես» ծրագրի իրականացման հարցերը: Նիստի շրջանակներում հաստատվել է 2025-2028թթ. ԵԱՏՄ-Իրան առևտրատնտեսական համագործակցության զարգացման համատեղ միջոցառումների ծարագիրը (Ճանապարհային քարտեզը): Ճանապարհային քարտեզի նպատակն է ապահովել Համաձայնագրի արդյունավետ իրականացումը՝ առևտրային քաղաքականության, մաքսասակագնային, ոչ սակագնային կարգավորման և ներքին շուկայում պաշտպանական միջոցների, տեխնիկական կանոնակարգման, սանիտարական, անասնաբուժասանիտարական և կարանտիային բուսասանիտարական միջոցների կիրառման, առևտրային ընթացակարգերի պարզեցման և մաքսային համագործակցության, տրանսպորտի և գործարար միջավայրի ոլորտներում փոխգործակցության ընդլայնմամբ: - ԵԱՏՄ -Մոնղոլիա Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Մոնղոլիայի՝ մյուս կողմից, միջև ժամանակավոր առևտրային համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2025 թվականի հունիսի 27-ին: Ներկայումս իրականացվում են Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը: Համաձայնագրի նպատակն է ազատականացնել և պարզեցնել Կողմերի միջև ապրանքների		

			առևտուրը, այդ թվում՝ սակագնային և ոչ սակագնային խոչընդոտների նվազեցման միջոցով, աջակցել Կողմերի միջև տնտեսական և առևտրային փոխգործակցությանը, ինչպես նաև խրախուսել Կողմերի միջև առևտրի ընդլայնումը և բազմազանեցումը: Համաձայնագրի կիրարկման արդյունքում նախատեսվում է ապահովել Համաձայնագրի կողմերի միջև առևտրի ընդլայնում և դիվերսիֆիկացում, ինչպես նաև բարձրացնել ԵԱՏՄ անդամ պետությունների ապրանքների մրցունակությունը մոնոդոլական շուկայում՝ ավելացնելով արտահանման ծավալները: Համաձայնագիրը կարգավորում է տնտեսական համագործակցության հարցերի լայն շրջանակ, մասնավորապես՝ իրավական և հորիզոնական պարտավորությունները, փոխադարձ առևտրի դյուրացումն ու խթանումը, մաքսային կարգավորումը, սանիտարական և բուսասանիտարական միջոցառումները, էլեկտրոնային առևտուրը, վեճերի լուծումը և այլ բնագավառներին առնչվող խնդիրներ: Համաձայնագիրը սահմանում է կողմերի սակագնային պարտավորությունների ցանկը, ապրանքների ծագումը որոշելու կանոնները, Համաձայնագրի գործողության շրջանակում տեղեկատվության փոխանակման հետ կապված առանձնահատկությունները և այլն: Համաձայնագրով նախատեսվում է Համաձայնագրի գործողության ժամկետը սահմանել երեք տարի՝ հետագայում ևս երեք տարով երկարաձգելու հնարավորությամբ, եթե կողմերն այլ բան չպայմանավորվեն: - ԵԱՏՄ - Արաբական Միացյալ Էմիրություններ		

			Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Արաբական Միացյալ Էմիրությունների՝ մյուս կողմից, միջև տնտեսական գործընկերության մասին համաձայնագիրը ստորագրվել է 2025 թվականի հունիսի 27-ին: Ներկայումս իրականացվում են Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը: Համաձայնագրի նպատակն է ազատականացնել և պարզեցնել Կողմերի միջև ապրանքների առևտուրը, աջակցել Կողմերի միջև տնտեսական և առևտրային փոխգործակցությանը, ինչպես նաև խրախուսել Կողմերի միջև առևտրի ընդլայնումը և բազմազանեցումը: Համաձայնագրի կիրարկման արդյունքում նախատեսվում է ապահովել Համաձայնագրի կողմերի միջև առևտրի ընդլայնում և դիվերսիֆիկացում, ինչպես նաև բարձրացնել ԵԱՏՄ անդամ պետությունների ապրանքների մրցունակությունը էմիրաթական շուկայում՝ ավելացնելով արտահանման ծավալները: - ԵԱՏՄ – Ինդոնեզիայի Հանրապետություն «Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Ինդոնեզիայի Հանրապետության՝ մյուս կողմից, միջև ազատ առևտրի մասին» համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) նախագծին հավանություն է տրվել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2025թ. սեպտեմբերի 12-ի թիվ 26 կարգադրությամբ: Ներկայումս իրականացվում են Համաձայնագրի ստորագրման համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը: Համաձայնագրի մշակման նպատակով անցկացվել է բանակցությունների հինգ փուլ,		

			որոնց շրջանակներում քննարկվել են համաձայնագրի նախագծի տեքստը, սակագնային ազատականացման հարցերը, ինչպես նաև համաձայնագրերին կից ցանկերը, որոնց մեջ ներառված ապրանքատեսակների հանդեպ Կողմերը պատրաստ են տրամադրել սակագնային արտոնություններ: Համաձայնագրի նպատակն է ազատականացնել և պարզեցնել Կողմերի միջև ապրանքների առևտուրը, այդ թվում՝ սակագնային և ոչ սակագնային խոչընդոտների նվազեցման միջոցով, աջակցել Կողմերի միջև տնտեսական և առևտրային փոխգործակցությանը, ինչպես նաև խրախուսել Կողմերի միջև առևտրի ընդլայնումը: Համաձայնագիրը կարգավորում է տնտեսական համագործակցության հարցերի լայն շրջանակ, մասնավորապես՝ իրավական և հորիզոնական պարտավորությունները, փոխադարձ առևտրի դյուրացումն ու խթանումը, ներքին շուկայի պաշտպանությունը, մաքսային կարգավորումը, սանիտարական և բուսասանիտարական միջոցառումները, առևտրում տեխնիկական խոչընդոտները, էլեկտրոնային առևտուրը, մտավոր սեփականությունը, մրցակցությունը և այլ բնագավառներին առնչվող խնդիրներ: - Բանակցությունների հաջորդական փուլերի իրականացում ԵԱՏՄ շրջանակներում՝ երրորդ երկրների հետ ազատ առևտրի համաձայնագրերի ուղղությամբ՝ ԵԱՏՄ - Եգիպտոսի Արաբական Հանրապետություն ազատ առևտրի համաձայնագրով՝ բանակցությունների վեց փուլ, ԵԱՏՄ - Հնդկաստանի Հանրապետություն ազատ առևտրի համաձայնագրով՝ բանակցությունների մեկ փուլ:		

			Նշյալ համաձայնագրերի շուրջ վարվող 2025 թվականի բանակցային փուլերի ընթացքում հիմնականում քննարկվել են սակագնային ազատականացման հարցերը, ինչպես նաև համաձայնագրերի նախագծերի տեքստերի չհամաձայնեցված դրույթները: Քննարկվել են նաև համաձայնագրերին կից ցանկերը, որոնց մեջ ներառված ապրանքատեսակների հանդեպ Կողմերը պատրաստ են տրամադրել սակագնային արտոնություններ: Նշված ցանկերում հայկական կողմից ներկայացվել են ՀՀ համար արտահանման հետաքրքրություն ունեցող մի շարք ապրանքներ: Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը մասնակցել է ԵԱՏՄ շրջանակներում Արաբական Միացյալ Էմիրությունների, Ինդոնեզիայի, Մոնղոլիայի և Հնդկաստանի հետ իրականացվող ազատ առևտրի համաձայնագրերի կնքմանն ուղղված համատեղ աշխատանքային խմբերի հանդիպումներին, վերլուծություններին և ուսումնասիրություններին: - ԵԱՏՄ – Վիետնամի Սոցիալիստական Հանրապետություն Շարունակվում են ԵԱՏՄ – Վիետնամի Սոցիալիստական Հանրապետություն ազատ առևտրի համաձայնագրի իրականացման արդյունավետության բարձրացմանն ուղված աշխատանքները: 2025թ. նշվել է ԵԱՏՄ-Վիետնամ համագործակցության 10-ամյակը, որի կապակցությամբ միջոցառմանը ՀՀ դեսպանի մասնակցության նպատակով Արտաքին գործերի նախարարություն ներկայացվել է տեղեկատվություն Հայաստան- Վիետնամ ընթացիկ համագործակցության և խնդիրների, ինչպես նաև արտաքին առևտրաշրջանառության		

			վերաբերյալ: Համաձայնագրի արդիականացման շրջանակներում վիետնամական կողմի հետ համագործակցության հետագա զարգացման և խորացման նպատակով հայկական կողմը ևս մեկ անգամ վերահաստատել է իր հետաքրքրությունը կոնյակի արտադրանքի՝ վիետնամական շուկա մուտքի ազատականացման վերաբերյալ: - ԵԱՏՄ- Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն 2025թ. նոյեմբերի 12-ին կայացել է ԵԱՏՄ - Չինաստան առևտրատնտեսական համագործակցության համաձայնագրի իրագործման նպատակով հիմնված համատեղ կոմիտեի հինգերորդ նիստը, որի ընթացքում քննարկվել են ԵԱՏՄ անդամ երկրների և Չինաստանի միջև փոխադարձ առևտրի խոչընդոտների, առևտրի պաշտպանական միջոցների, սանիտարական և բուսասանիտարական միջոցների, տեխնիկական կանոնակարգերի, մաքսային համագործակցության, մրցակցության և պետական գնումների, շուկայի մուտքի և ոլորտային համագործակցության այլ հարցեր: - Հայաստանի Հանրապետություն - Արաբական Միացյալ Էմիրություններ Պայմանավորվածություն է ձեռք բերվել Արաբական Միացյալ Էմիրությունների հետ երկկողմ ծառայությունների և ներդրումների մասով համաձայնագրի կնքման վերաբերյալ: 2025 թվականի օգոստոսի 7-ի թիվ 1075-Ա ՀՀ կառավարության որոշմամբ հավանություն է տրվել «Հայաստանի Հանրապետության կառավարության և Արաբական Միացյալ Էմիրությունների կառավարության միջև ծառայությունների առևտրի և ներդրումների մասին» համաձայնագրի ստորագրման առաջարկությանը: Ներկայումս իրականացվում են		

			Համաձայնագրի տեքստի նախաստորագրման ընթացակարգերը:		
		6.6 ԵԱՏՄ համագործակցության շրջանակներում, ինչպես նաև երրորդ երկրների հետ փոխադարձ առևտրում խոչընդոտների և արգելքների բացահայտում և վերացման ուղղությամբ առաջարկությունների ներկայացում	Վերոնշյալ միջոցառման շրջանակներում ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից իրականացվում են ինչպես ԵԱՏՄ անդամ պետությունների փոխադարձ առևտրում առկա խոչընդոտների, այնպես էլ երրորդ երկրների հետ առևտրում առկա խոչընդոտների, սահմանափակումների և արգելքների բացահայտմանը և վերացմանն ուղղված աշխատանքներ: Որպես նշված միջոցառման կատարման ուղղությամբ նախանշվող աշխատանքներ 2025 թվականին ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից իրականացվել են հետևյալ միջոցառումները. - «Եվրասիական վերաապահովագրական ընկերության հիմնադրման մասին» համաձայնագրի շրջանակներում՝ Եվրասիական վերաապահովագրական ընկերության (ԵՎԸ) և Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն ԱՓԲԸ–ի (ՀԱԱԳ ԱՓԲԸ) միջև 2024 թվականի հուլիսի 24–ին կնքվել է Վերաապահովագրության հիմնական պայմանների մասին պայմանագիրը: Ընկերության գործունեության արդյունքում ԵԱՏՄ անդամ պետությունների շուկայում ձևավորվել է լրացուցիչ ապահովագրական ծածկույթ՝ 120.4 մլրդ ՌԴ ռուբլու չափով, ինչը թույլ կտա աջակցել ներքին և արտաքին առևտրի ծավալներին ավելի քան 361.3 մլրդ ՌԴ ռուբլու չափով և ապահովել ապահովագրման միասնական պայմաններ ԵԱՏՄ անդամ պետությունների համատեղ		

			արտադրված ապրանքների համար: Հանրապետության մասնակցության մասնաբաժնի ծավալը սահմանվել է Ընկերության կանոնադրական կապիտալի 3%-ի չափով՝ 450 մլն ՌԴ ռուբլի: Բարեփոխման իրականացման համար Հայաստանի Հանրապետությունը վճարել է ընկերության կանոնադրությամբ սահմանված իր 1-ին և 2-րդ մասնաբաժինները (2023թ.՝ 112 500 000,00 ՌԴ ռուբլի, 2024թ.՝ 168 750 000,00 ՌԴ ռուբլի): Ընկերության կանոնադրությամբ սահմանված Հայաստանի Հանրապետության երրորդ մասնաբաժնի վճարումը (168 750 000,00 ՌԴ ռուբլի) կատարվել է մասնակի՝ պայմանավորված տարադրամի փոխարժեքի տատանմամբ: 2025 թվականի սեպտեմբերին վճարվել է երրորդ մասնաբաժնի մասը՝ 142 667 316,00 ՌԴ ռուբլու չափով, մնացած մասը՝ 26 082 684,00 ՌԴ ռուբլու չափով նախատեսվում է վճարել մինչև դեկտեմբերի 17-ը: Վերաապահովագրության նպատակով ՀԱԱԳ ԱՓԲԸ–ի կողմից ԵՎԸ–ին ներկայացվել են թվով 23 հատ հարցում, որից՝ 15–ը հաստատվել են՝ 1 ընկերությունով, մոտ 12,3 մլն ԱՄՆ դոլարի չափով, 5–ը մերժվել են՝ 5 ընկերությունով, մոտ 2,3 մլն ԱՄՆ դոլարի չափով, 3-ը վերլուծության փուլում է՝ 3 ընկերությունով, մոտ 20,5 մլն ԱՄՆ դոլարի չափով: Տեղեկատվությունը ներկայացված է 01.12.2025թ.-ի դրությամբ՝ (28.11.2025թ.-ի դրությամբ ԿԲ-ի փոխարժեքով): - 2025 թվականին շարունակվել են իրականացվել աշխատանքներ արդյունաբերական ապրանքների Եվրասիական ռեեստրում ընդգրկված ապրանքների ցանկի ընդլայնման ուղղությամբ, հաշվի առնելով նաև այն ապրանքները, որոնք արտադրվում են կամ կարող են արտադրվել հայկական ապրանքարտադրողների կողմից: Նշված ապրանքներն արտադրող ընկերությունների գրանցումը Եվրասիական ռեեստրում թույլ կտա հայկական		

			ապրանքարտադրողներին մասնակցելու Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների պետական (մունիցիպալ) գնումներին, ինչն իր հերթին հնարավորություն է վերջիններիս համար՝ ներկայացնելու իրենց արտադրանքը Եվրասիական տնտեսական միության շուկայում: Էկոնոմիկայի նախարարության կողմից աշխատանքներ են իրականացվել նաև նշյալ ռեեստրում արդեն իսկ ընդգրկված ապրանքներ արտադրող հայկական ընկերություններին այդ ռեեստրում գրանցելու ուղղությամբ: Ներկայումս արդյունաբերական ապրանքների Եվրասիական ռեեստրում գրանցված են 104 հայկական ապրանքատեսակ (էլեկտրական միակցիչներ, բժշկական ապրանքներ (քայլակ, բժշկ. մահճակալներ, խոսափող, ալկոհոլի ցուցիչ և այլն), լուսատախտակ պտտվող սեղան, լուսավորության համար նախատեսված ամրան, լուսատու ուղղահայաց և այլն) և 4 հայկական ընկերություն («Վան» ԲԲԲ, «Նիգ» ԲԲԲ, «Արիդես» ՍՊԸ և «Էջմիածնի Սարքաշինական գործարան» ՓԲԸ): Ներկայումս աշխատանքներ են տարվում «Ռաստեր գործարան» ԲԲԲ (էլեկտրական միացուցիչներ) և «Եվրոֆուրնիտուրա» ՍՊԸ (սուպեր սոսինձ, սիլիկոն և շինարարական սիլիկոն) ընկերությունների հետ վերջիններիս կողմից արտադրվող հայկական ծագման ապրանքները նշված Եվրասիական ռեեստրում ներառելու ուղղությամբ: - 2025 թվականի ընթացքում շարունակվել են Եվրասիական տնտեսական միջկառավարական խորհրդի 2021 թվականի նոյեմբերի 19-ի N10 որոշմամբ հաստատված՝ «Էլեկտրոնային առևտրի զարգացման համար բարենպաստ պայմաններ ստեղծելուն ուղղված» գործողությունների ծրագրով նախատեսված աշխատանքները: Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (ԵՏՀ) հարթակում կայացել են մի շարք		

			քննարկումներ «ԵԱՏՄ-ում ապրանքների էլեկտրոնային առևտրի մասին» Համաձայնագրի նախագծի շուրջ: Քննարկումների արդյունքներով՝ Համաձայնագրի բովանդակության և շրջանակների մասին համաձայնություն ձեռք չի բերվել: Մասնավորապես՝ դա վերաբերում է համաձայնագրի կիրառման շրջանակներին, որոշ հասկացություններին, վեճերի ոչ դատական կարգով լուծման համակարգին, էլեկտրոնային առևտրի մասնակիցների միություններին, ԵՏՀ իրավասությունների շրջանակներին և այլն: Հաշվի առնելով այն, որ 2024 թվականի ընթացքում ԵԱՏՄ անդամ պետությունների կողմից ներկայացված առաջարկությունների հիման վրա լրամշակված Համաձայնագրի նախագիծը էականորեն փոփոխվել է, ուստի 2025 թվականի փետրվարի 25-ի ԵՏՀ կոլեգիայի №14 որոշմամբ Համաձայնագրի նախագիծը կրկին ուղարկվել է համաձայնեցման: Նշենք, որ այն քննարկվ է ս.թ. դեկտեմբերի 5-ի ԵՏՀ խորհրդի նիստում: Քննարկման արդյունքներով որոշում է կայացվել հարցը ներառել ս.թ. դեկտեմբերի 11- ի Եվրասիական միջկառավարական խորհրդի նիստի օրակարգում վերջնական համաձայնեցնելու նպատակով: Հարկ է նշել, որ 2025 թվականի ընթացքում մշակվել և համաձայնեցվել են «Ֆիզիկական անձանց կողմից գնված էլեկտրոնային առևտրի ապրանքների համար մաքսատուրքի միասնական դրույքաչափ սահմանելու մասին» և «Գնային չափաքանակների սահմանման մասին, որոնց շրջանակներում ֆիզիկական անձանց կողմից գնված էլեկտրոնային առևտրի ապրանքները ներմուծվում են Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք՝ առանց մաքսատուրք վճարելու» ԵՏՀ խորհրդի որոշումների նախագծերը, որոնք նույնպես քննարկվել են ս.թ. դեկտեմբերի 5-ի ԵՏՀ խորհրդի նիստում: Միաժամանակ, 2025 թվականի հունվարի 21-ին ԵՏՀ կոլեգիայի կողմից հաստատվել է		

			«Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 21-ի N30 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N9 որոշումը՝ կապված միասնական ցանկում ընդգրկված այն ապրանքների ներմուծման առանձնահատկությունների հետ, որոնք գնված են ֆիզիկական անձանց կողմից էլեկտրոնային առևտրի միջոցով և որոնց հանդեպ կիրառվում են ոչ սակագնային կարգավորման միջոցներ:		
7	Արդյունաբերության զարգացում՝ ոլորտին ուղղելով 80 մլրդ ֆինանսական միջոցներ Մշակող արդյունաբե-ություն/ՀՆԱ՝ 15%, Տնտեսական բարդության ցուցանիշը՝ -0.3-ից հասցնել 0.1-ի	7.4 Տնտեսական բարդություն ապահովող արտադրությունների աջակցության կառուցակարգի և գործիքակազմի ծրագրի մշակում և իրականացում, «Տնտեսական բարդություն ապահովող արտադրությունների աջակցության կառուցակարգի և գործիքակազմի ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման հաստատում	**Կատարված է** Ընդունվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետությունում տնտեսապես բարդ ապրանքների արտադրությամբ զբաղվող առևտրային ընկերություններին պետական աջակցության տրամադրման ծրագիրը հաստատելու մասին» N 1867-Ն որոշումը:		

8	Կանաչ և կայուն տնտեսական զարգացում	8.1 Կանաչ և կայուն տնտեսական զարգացման ռազմավարության մշակում և հաստատման դեպքում՝ դրա իրագործում	2025 թվականի նոյեմբերի 12-ին ընդունվել է ՀՀ վարչապետի «Կանաչ, կայուն և շրջանաձև տնտեսության զարգացման շրջանակային գործողությունների ծրագիրը (մինչև 2030 թվականը) հաստատելու մասին» N 1028-Լ որոշումը:		
		8.3 Էլեկտրամոբիլների և էլեկտրական շարժիչներով աշխատող տրանսպորտային միջոցների և հարակից ենթակառուցվածքների ներդրման ծրագրի իրականացում	Մշակվել է էլեկտրամոբիլների և էլեկտրական շարժիչներով աշխատող տրանսպորտային միջոցների և հարակից ենթակառուցվածքների զարգացման ճանապարհային քարտեզի նախագիծը և տրամադրվել ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն՝ վերջինիս կողմից մշակված Հայաստանի Հանրապետությունում էլեկտրական շարժունակության զարգացման ռազմավարության նախագծում ներառելու նպատակով՝ հիմք ընդունելով ՀՀ փոխվարչապետ Մհեր Գրիգորյանի՝ 2023 թվականի սեպտեմբերի 8-ի թիվ /03.8/31094-2023 հանձնարարականը:		
		8.4 Բնական ռեսուրսների տնտեսական ցիկլում առավել երկար պահպանման նախադրյալների ստեղծում, «Բնական ռեսուրսների տնտեսական ցիկլում առավել երկար պահպանման նախադրյալների ստեղծման հայեցակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և հաստատում	2025 թվականի նոյեմբերի 12-ին ընդունվել է ՀՀ վարչապետի «Կանաչ, կայուն և շրջանաձև տնտեսության զարգացման շրջանակային գործողությունների ծրագիրը (մինչև 2030 թվականը) հաստատելու մասին» N 1028-Լ որոշումը:		

		8.5 Կանաչ ջրածնի արտադրության զարգացում	1. 2025 թվականին տեղի է ունեցել ՀՀ վարչապետի 2024թ. հունիսի 4-ի N 531-Ա որոշմամբ ձևավորված կանաչ ջրածնի ոլորտի զարգացմանը, դրա առավելությունների, արտադրության մեթոդների և տեխնոլոգիաների բացահայտմանը միտված աշխատանքային խմբի 2 հանդիպում: 2. 2025 թվականին կայացել են միջազգային առաջատար ընկերությունների ներկայացուցիչների հետ կանաչ ջրածնի արտադրության զարգացման, կիրառության ուղղությունների ու ոլորտների, ներքին սպառման ծավալների, արտահանման հնարավոր շուկաների և կանաչ ջրածնի պահեստավորման շուրջ կայացած հանդիպում-քննարկումներ:		
		8.6 Կանաչ տաքսոնոմիայի մշակում և հաստատում	2025թ. հունիսի 26-ին ընդունվել է ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետությունում կանաչ, անցումային և նպաստող ծրագրերի և միջոցառումների տեսակների դասակարգման համակարգը (տաքսոնոմիան) հաստատելու մասին» N 852-Լ որոշումը:		

9	Գյուղատնտեսության զարգացում և արտադրողականության բարձրացում ԳՀԱ՝ 1.4 տրլն դրամ Անմշակ վարելահողերը < 120 հազար հա	9.1 ՀՀ գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարության իրականացում	Կատարված է: 2025 թվականի հունվար-սեպտեմբերին գյուղատնտեսության համախառն արտադրանքը կազմել է շուրջ 686.5 մլրդ ՀՀ դրամ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել է 6%-ով: Այդ թվում, բուսաբուծությունը կազմել է շուրջ 405 մլրդ ՀՀ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել 9.5%-ով, և անասնաբուծությունը՝ շուրջ 281.5 մլրդ ՀՀ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել 1.5%-ով: ՀՀ գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030թթ. ռազմավարության կատարումն ապահովող 2025թ. միջոցառումների իրականացման ընթացքի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ՝ 2025թ. դեկտեմբերի 22-ի 01/29145-2025 գրությամբ: Միաժամանակ տեղեկացվում է, որ 9.1 միջոցառման կատարման ընթացքը ներառված է նաև ստորև ներկայացված 9.2-9.12 կետերում:		
		9.2 Բուսաբուծության ճյուղի զարգացման խթանում	Կատարված է: **Յուրաքանչյուր տարի առնվազն 1000 հա ինտենսիվ այգիների հիմնում** Ինտենսիվ այգեգործության զարգացման ծրագրի շրջանակում հիմնվել է 1365 հա մակերեսով ինտենսիվ այգի: Միաժամանակ, ծրագրի շրջանակում հաստատվել է 1399 հա այգեհիմնման հայտ: Տնամերձ հողամասերում այգեհիմնման և ոռոգման արդիական համակարգերի ներդրման փորձնական երկրորդ ծրագրի շրջանակում Իջևանի համայնքապետարանի կողմից 97		

			քաղաքացիների հետ կնքվել են մասնակցության պայմանագրեր, 6 հա ընդհանուր մակերեսով տնամերձ հողամասերում այգեհիմնման և հռոգման արդիական համակարգերի ներդրման համար: Ծրագրի շրջանակում Իջևանի համայնքապետարանի կողմից հայտարարվել է գնահատող կազմակերպության ընտրության մրցույթ: Պայմանագրի շրջանակում գնահատող ընկերությանը տրամադրվել է 38.04 մլն ՀՀ դրամ: **Տեղական սերմնաբուծության և սերմարտադրության իրականացման միջոցով գյուղատնտեսական մշակաբույսերի սերմերի առկայության ապահովում** Կարտոֆիլի վիրուսազերծ տնկանյութի արտադրության մեկ ամբողջական ցիկլ իրականացված է, որի արդյունքում ստացվել է 10 տոննա կարտոֆիլի էլիտային տնկանյութ: Զուգահեռ մինի պալարների արտադրությունը շարունակվում է: «Գյուղատնտեսական հետազոտությունների և հավաստագրման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից հավաստագրվել է տեղական արտադրության 5362.3 տոննա հացահատիկային մշակաբույսերի և 23.24 տոննա բանջարաբոստանային, հատիկաընդեղեն, կերային և յուղատու մշակաբույսերի սերմեր: ՀՀ կառավարության 2025թ. մարտի 27-ի N 356-Լ Բուսաբուծության աջակցության 2025 թվականի ծրագրի շրջանակներում իրականացվել է շուրջ 24006 հա հացահատիկային, հատիկաընդեղեն և կերային մշակաբույսերի ցանքեր, այդ թվում՝ սերմնադաշտեր: **Տնկանյութի հավաստագրման համակարգի ներդրում**		

			Տնկանյութի հավաստագրման գործընթացի իրականացման նպատակով «Գյուղատնտեսական հետազոտությունների և հավաստագրման կենտրոն» ՊՈԱԿ-ի հաստիքացուցակում ավելացվել են թվով երկու ագրոնոմի հաստիքներ, որի նպատակով ՀՀ կառավարության 2025թ. օգոստոսի 28-ի N 1230-Ն որոշման համաձայն կտրամադրվի տարեկան լրացուցիչ շուրջ 7 մլն ՀՀ դրամ: Ներկայումս տնկանյութի հավաստագրման նպատակով ներկայացված են թվով 5 հայտ: Տնկարանային տարածքների դաշտային հետազոտողների վերապատրաստման դասընթացների մասնակցության նպատակով հավաքագրվել են հայտեր, և «Հայաստանում այգեպտղաբուծության ոլորտի զարգացման նախագիծ» FRUITENIA-2 ծրագրի շրջանակներում «Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոնի» (ICARE) կողմից ս.թ. դեկտեմբերի 15-ից մեկնարկել են դաշտային հետազոտողների վերապատրաստման դասընթացները՝ համաձայնեցված թեմաների շրջանակներում: GIZ (Գերմանական միջազգային համագործակցության ընկերություն) ProGress ծրագրի կողմից «Գյուղատնտեսական հետազոտությունների և հավաստագրման կենտրոն» ՊՈԱԿ-ին տնկանյութի հավաստագրման գործընթացի իրականացման նպատակով տրամադրվել են All-in One PC, Laptop, Thermal transfer or direct thermal label printer, Thermal Transfer Resin Ribbon, Matte Silver Thermal Transfer Label Ribbon, Industrial Thermal Transfer & Direct Thermal label printer, Cordless handheld 1D/2D barcode scanner անվանումներով սարքավորումները: GIZ ProGress ծրագրի կողմից հայտարարվել է ցուցադրական նախագծի՝		

			տնկարանների կարողությունների զարգացման մրցույթ, որի արդյունքները կամփոփվեն առաջիկայում: Մշակվել է «Խաղողի այգիների դաշտային հետազոտության» (Ապրոբացիա) հրահանգի նախագիծը, հնդավորների և կորիզավորների ազգային ստանդարտները, որոնք առաջիկայում կներկայացվեն հաստատման: Նախատեսվում է դիմել Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության (SDC) կողմից ֆինանսավորվող SIGMA ծրագրին՝ տնկանյութի հավաստագրման գործընթացում կիրառելու նպատակով հիվանդությունների ախտորոշման GENIE I II III սարքի տրամադրման համար: **Ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի տարածքների ավելացում** ՀՀ-ում ինտենսիվ այգեգործության զարգացման, արդիական տեխնոլոգիաների ներդրման և ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի արտադրության խթանման պետական աջակցության 2021-2025թթ. ծրագրի շրջանակներում հիմնվել է 7 հա ծնեբեկի ցանքատարածություն և հաստատվել է 8.9 հա-ի հայտ: **Արդիական տեխնոլոգիաներով ջերմատնային տնտեսությունների տարածքների ընդլայնում՝ վարկային լիզինգային և փոխհատուցման գործիքներով տարեկան մինչև 10 հա** Ջերմատնային տնտեսությունների զարգացման նպատակով պետության կողմից իրականացվող ծրագրերի շրջանակում կառուցվել է 25.7 հա ընդհանուր մակերեսով ջերմատնային		

			տնտեսություն, և մեկնարկել է 64.8 հա-ի կառուցման գործընթացը: **Տարեկան շուրջ 500 միավորով գյուղատնտեսական տեխնիկայի հավաքակազմի նորացում** Գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի ծրագրի շրջանակում ձեռք է բերվել 1219 միավոր գյուղատնտեսական տեխնիկա, այդ թվում՝ 333 միավոր տրակտոր և 2 միավոր կոմբայն, որոնց գծով լիզինգի գործարքների հանրագումարը կազմել է 5 մլրդ ՀՀ դրամ: **Գյուղատնտեսական մշակաբույսերի ապահովագրության համակարգի ամբողջական ներդրում** Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի շրջանակներում 2025 թվականի գյուղատնտեսական տարվա համար կնքել է 32 պայմանագիր, ապահովագրվել է 20 հա, համախառն ապահովագրավճարը կազմել է շուրջ 1.8 մլն ՀՀ դրամ, սուբսիդավորման գումարը՝ շուրջ 1.3 մլն ՀՀ դրամ, տրամադրվել է շուրջ 788 հազ. ՀՀ դրամի հատուցում:		

		9.3 Անասնաբուծության ճյուղի զարգացման խթանում	Կատարված է: **Տոհմային գործի բարելավում՝ տարեկան 10-15 %-ով տոհմային կենդանիների տեսակարար կշռի ավելացում** Տոհմային գործի բարելավման, տավարի նախիրներում և ոչխարի հոտերում բարձր մթերատու կենդանիների տեսակարար կշիռն ավելացնելու նպատակով նախարարության կողմից իրականացվել է պետական աջակցության 3 ծրագիր, որոնք միտված են արտերկրից համաշխարհային ճանաչում ունեցող դասական ցեղերի տոհմային կենդանիների ներկրման խթանմանը, հանրապետությունում բուծվող տավարի ցեղերի գենոֆոնդի բարելավմանը և մթերատվության բարձրացմանը: Տավարաբուծության զարգացման 2025-2029թթ. ծրագրի շրջանակներում ձեռք է բերվել շուրջ 140 գլուխ հոլշտին և ֆլեկվի ցեղերի տոհմային երինջներ, որոնցից ստացվել է ավելի քան 90 գլուխ բարձրարժեք սերունդ: Դրան զուգահեռ, հանրապետությունում նախորդ տարիներից ներկրված և արդեն իսկ առկա շուրջ 11000 գլուխ տոհմային կենդանիներից ստացվել է ևս ավելի քան 46300 սերունդ և 2025թ. հունվարի 1-ի դրությամբ հանրապետության տավարի ընդհանուր գլխաքանակից (476 հազար) շուրջ 57.3 հազարը կամ գրեթե 12%-ը կազմում է տոհմային կենդանիներից ստացված սերունդը: Ոչխարաբուծության և այծաբուծության զարգացման 2024-2028թթ. ծրագրի շրջանակում ձեռք է բերվել 571 գլուխ բարձր պտղատվությամբ և մսային հատկանիշներով օժտված՝ բլանշ և էդիլբևայան ցեղերի տոհմային ոչխարներ և 78 գլուխ զաանենյան և ալպիական ցեղերի տոհմային այծեր: Ներկրված կենդանիներից և		

			հանրապետությունում մինչ այդ առկա տոհմային կենդանիներից արդեն իսկ ստացվել է բարձր մթերատվությամբ աչքի ընկնող շուրջ 81200 կենդանիներ, ինչը կազմում է հանրապետությունում 2025թ. հունվարի 1-ի դրությամբ առկա մանր եղջերավոր կենդանիների ընդհանուր գլխաքանակի (շուրջ 668 հազար գլուխ) շուրջ 12%-ը: Հարկ է նշել, որ միայն 2021-2025թթ. ձեռք բերված կենդանիներից ստացվել է 30027 գլուխ սերունդ, կամ 2025թ. 10.8% ԽԵԿ և 18.8% ՄԵԿ: Մթերատվության բարձրացման փորձնական ծրագրի շրջանակում ՀՀ Շիրակի, Սյունիքի, Գեղարքունիքի և Արագածոտնի մարզերում իրականացվել է 3350 կովերի արհեստական սերմնավորում: **Գյուղատնտեսական կենդանիների համարակալման և հաշվառման համակարգի ներդրում** «ՀՀ-ում խոշոր եղջերավոր կենդանիների համարակալում և հաշվառում» ծրագրի շրջանակներում իրականացվել է 164 568 գլուխ խոշոր եղջերավոր և 865 284 գլուխ մանր եղջերավոր կենդանու համարակալում և հաշվառում, իսկ ՀՀ ԷԱՃԱՊՁԲ-24/89 ծածկագրով կայացած մրցույթի արդյունքում ձեռք են բերվել մանր եղջերավորներ կենդանիների ականջապիտակներ: **Տարեկան շուրջ 25 միավոր խելացի անասնաշենքերի կառուցման խթանում, 2025թ.**	Կատարված է մասնակի: Մասնակի կատարումը պայմանավորված է դաբաղի նկատմամբ լրացուցիչ երկու անգամ պատվաստում իրականացնելու հանգամանքով:	

			-ին մինչև 20 խելացի անասնաշենքերի կառուցման խթանում. Փոքր և միջին «խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման աջակցության ծրագրի շրջանակում մասնակցության հայտերի ընդունումն ավարտվել է 2023թ. դեկտեմբերի 31-ին, ուստի 2025թ.-ին պետական աջակցություն տրամադրելու վերաբերյալ պայմանագրեր չեն կնքվել, սակայն 2024.թ-ին կնքված պայմանագրերի շրջանակում կառուցվել և տեխնոլոգիապես ապահովվել է 5 «խելացի» անասնաշենք: Վարկերի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորման բաղադրիչով վարկային պայմանագրեր չեն կնքվել: «Խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման աջակցության 2025-2028թթ. ծրագրի շահառու է հաշվառվել 3 իրավաբանական անձ: Վարկերի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորման բաղադրիչով մասնակցության հայտեր չեն ներկայացվել և վարկային պայմանագրեր չեն կնքվել:	Կատարված է մասնակի: 2025 թվականին նախատեսվող մինչև 20 անասնաշենքի կառուցումը պայմանավորված է եղել նոր ծրագրի մեկնարկով: Քանի որ նոր ծրագիրը հաստատվել է ՀՀ կառավարության 2025թ. ապրիլի 10-ի N 419-Լ որոշմամբ, արդյունքում ստացվել է ծրագրին մասնակցության ընդամենը 12 հայտ, որից ծրագրի դրույթներին համապատասխանել և շահառու են հաշվառվել ընդամենը 3 կազմակերպություն:	
		9.4 Ագրոպարենային արտադրանքի իրացման և արտահանման խթանում	Կատարված է: **Մեծածախ շուկաների, լոգիստիկ կենտրոնների, արտահանման հիմնական շուկաներում հավաքական պահեստների ստեղծմանն աջակցության միջոցով առնվազն 1 մեծածախ շուկայի կամ լոգիստիկ կենտրոնի և առնվազն 2 հավաքական պահեստի ստեղծում** Լոգիստիկ և շուկայավարման կենտրոնների գործառույթներ են իրականացրել «Սպայկա» և «Արլեամ (Սորտստոր)» ՍՊԸ-ների կողմից: 2025թ. սեպտեմբերին «Սպայկա» ՍՊԸ-ի կողմից		

			Արարատի մարզի Տափերական բնակավայրում շահագործման է հանձնվել շուրջ 10000 տոննա հզորությամբ սառնարանային համալիր: 2025թ. նոյեմբերին «Ագրոպրո» ՓԲԸ-ի կողմից շահագործման է հանձնվել ժամանակակից արդիական տեխնոլոգիաներով հագեցած գյուղատնտեսական առաջնային արտադրանքի լոգիստիկ կենտրոնը, որը կիրականացնի թարմ մրգի սառեցման, պահեստավորման, տեսակավորման, փաթեթավորման և արտահանման գործառույթներ: Լոգիստիկ կենտրոնն ունի ժամում 25 տոննա տեսակավորման և փաթեթավորման, 1800 տոննա երկարաժամկետ պահպանման և օրական մինչև 350 տոննա արտահանման, ինչպես նաև ժամում շուրջ 1500 հատ ստվարաթղթե տարաների արտադրության հզորություն: Զուգահեռաբար ընթանում են սառնարանային հզորությունների ավելացման աշխատանքներ: Գերմանիայի Դաշնության Բեռլին քաղաքում շարունակել է գործել մեկ հավաքական պահեստը և Եվրոպայում հայկական գինիների առցանց վաճառքի հարթակը, որը հասանելի է winesofarmenia.store կայքով: Բացի այդ, Ասիական զարգացման բանկի կողմից ֆինանսավորվող ADB CAFSEP ծրագրի «Agricultural Logistics Hubs Feasibility Study» առաջադրանքի շրջանակներում իրականացվում է Հայաստանի համար երկու գյուղատնտեսական լոգիստիկ հանգույցների տեխնիկատնտեսական իրագործելիության ուսումնասիրություն՝ Շիրակի և Տավուշի մարզերում, որի նպատակն է բարձրացնել բուսաբուծական արժեշղթաների արդյունավետությունը, նվազեցնել հետբերքահավաքային կորուստները, բարելավել շուկաներին հասանելիությունը և ձևավորել		

			ներդրումային պատրաստի ենթակառուցվածքային լուծումներ: Կկատարվեն նաև լոգիստիկ կենտրոնների հավանական տեղակայման և մասշտաբների որոշում, նախնական նախագծային և ծախսային հաշվարկներ: **Հումքի մթերման գործընթացին, կոնյակի ու կոնյակի սպիրտի արտահանմանն աջակցություն, ինչպես նաև գինեգործության ու կոնյակագործության արտադրության խթանման արդյունքում առաջիկա 5 տարիներին հումքի մթերման և թողարկվող արտադրանքի ծավալների ավելացում մինչև 50 %-ով կամ տարեկան շուրջ 10%-ով** Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակում հաստատվել է 238 հայտ՝ 19.6 մլրդ ՀՀ դրամի չափով, որոնց շրջանակում գյուղացիական տնտեսությունների հետ կնքվել է 7833 հատ բերքի գնման պայմանագիր: Բացի այդ, Ծրագրում կատարվել է համապատասխան լրացում, որով խաղողի մթերումների նպատակով տրամադրվող վարկերի գծով տնտեսավարողների մոտ ապահովման միջոցի ոչ բավարար մակարդակի դեպքում Կառավարության կողմից նախատեսվել է 2025թ. սեպտեմբերի 1-ից մինչև 2025թ. դեկտեմբերի 30-ը տրամադրել մինչև 50%-ի չափով բյուջետային երաշխիք, բայց ոչ ավելի, քան 2024 թվականին արտահանված արտադրանքի արժեքը: Բյուջետային երաշխիքից օգտվել է 6 շահառու՝ շուրջ 4.6 մլրդ ՀՀ դրամի չափով: Ձեռնարկված միջոցառումների արդյունքում խաղողի մթերումներն ընթացել են առանց		

			խոչընդոտների և մթերվել է շուրջ 200 հազար տոննա խաղող: Մթերվել է շուրջ 64.3 հազար տոննա պտուղբանջարեղեն, որից՝ շուրջ 34.7 հազար տոննա բանջարեղեն և 29.6 հազար տոննա պտուղ: 2025թ. 11 ամիսներին սննդամթերքի և խմիչքների արտադրության ծավալը կազմել է շուրջ 818.0 մլրդ ՀՀ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ աճել է 39.3 մլրդ ՀՀ դրամով կամ շուրջ 5.0%-ով: **Գյուղատնտեսական հումք մշակող ընկերությունների արտադրական կարողությունների հզորացում և արդիականացում՝ տարեկան շուրջ 250 միավոր սարքավորումների ձեռքբերմանն աջակցություն** ՀՀ-ում ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի աջակցության ծրագրի շրջանակում հաստատվել է 165 լիզինգի հայտ՝ շուրջ 6.9 մլրդ ՀՀ դրամ ծավալով, որոնց շրջանակում ձեռք է բերվել 422 միավոր սարքավորում: **Գինեգործական արտադրանքի ճանաչելիության բարձրացման միջոցառումների միջոցով 2 անգամ արտահանման ծավալների ավելացում կամ տարեկան 20%-ով աճ** Հայկական արտադրանքի ճանաչելիության բարձրացման, գործարար նոր կապերի հաստատման և համագործակցությունների ձեռքբերման, արտադրանքի արտահանման ծավալների աճի խթանման նպատակով.		

			1) կազմակերպվել է հայկական գինեգործական ընկերությունների մասնակցությունը Գերմանիայի Դյուսելդորֆում կայացած հեղինակավոր ProWein գինիների և ոգելից խմիչքների միջազգային ցուցահանդեսին, Ֆրանսիայի Փարիզում անցկացված Wine Paris միջազգային ցուցահանդեսին, Տոկիոյում կայացած FOODEX Japan Ասիայի խոշորագույն սննդի և ըմպելիքների ցուցահանդեսին, ինչպես նաև Եկատերինբուրգում անցկացվող ArmWine թեմատիկական ցուցահանդեսներին, 2) կազմակերպվել են հայկական գինիների մասնագիտական համտես-շնորհանդեսներ միջազգային փորձագետների, լրագրողների և ոլորտի մասնագետների համար, 3) հայկական գինեգործական ընկերությունների ներկայացրած գինիները արժանացել են բարձր մրցանակների Concours Mondial de Bruxelles և International Wine and Spirit Competition հեղինակավոր մրցույթներում, 4) Չինաստանի Ինչուան քաղաքում անցկացված Concours Mondial de Bruxelles մրցույթի շրջանակում հայկական պատվիրակությունը մասնակցել է որպես համտեսող-գնահատող: Մրցույթի վերջին օրը՝ հունիսի 12-ին, հայտարարվել է, որ 2026 թվականի մրցույթը կհյուրընկալի Հայաստանը, 5) Շվեյցարիայի «Շանժեն» խաղողագործության և գինեգործության բարձրագույն դպրոցի (HES-SO) միջազգային ամառային ծրագրի շրջանակում կազմակերպվել է մի շարք երկրների առաջատար համալսարանների ուսանողների այցը: Իրականացվել է նաև Ճապոնիայի ROTOBO «Business Matching» ծրագրի պատվիրակության այցը,		

			6) միջազգային մեդիա հարթակներում հրապարակվել է շուրջ 36, իսկ տեղական մեդիայում՝ շուրջ 61 հրապարակում՝ ուղղված հայկական գինեգործության ճանաչելիության բարձրացմանը, 7) հաջողությամբ ներկայացվել է հայտ և ընդգրկվել է Ճապոնիայի ԷԱԱ նախարարության կողմից ֆինանսավորվող Trade and Investment Promotion Project ծրագրում: «Business Matching» նախաձեռնության շրջանակում հայ գինեգործները առաջին անգամ միասնական տաղավարով մասնակցել են Տոկիոյում կայացած «FOODEX JAPAN» ցուցահանդեսին, 8) աջակցություն է տրամադրվել «Ամերիկյան երկրների մրցունակության փոխանակում» (ACE Armenia) ծրագրի մասնակիցների Վայոց ձորի այցի կազմակերպմանը, ինչպես նաև մասնակցություն է ապահովվել ոլորտային պանելային քննարկմանը, 9) սկսվել է համագործակցություն աշխարհի խոշորագույն գինու առցանց հարթակներից մեկի՝ Vivino-ի հետ: Գովազդային արշավներին մասնակցել է 14 հայկական գինեգործական ընկերության՝ 29 տարբեր անվանումների գինի, 10) Ֆրանսիայի Օվերն–Ռոն–Ալպ տարածաշրջանի հետ համագործակցության արդյունքում իրականացվել են փոխադարձ այցելություններ՝ փորձի փոխանակման նպատակով, 11) ամեն ամիս վերանայվում ու վերամշակվում են «Wines of Armenia» առցանց հարթակի սոցմեդիա էջերի համար նախատեսված արշավային տեքստերն ու լուսանկարները՝ ապահովելով բարձրակարգ մասնագիտական բովանդակություն,		

			12) կազմակերպվել է 6 ընկերության գինիների արտահանում դեպի Բեռլինում գործող լոգիստիկ կենտրոն՝ «Wines of Armenia» առցանց հարթակում ներկայացնելու համար: 13) GIZ-ի հետ համագործակցությամբ անցկացվել է գինեգործության ոլորտի ներկայացուցիչների երկօրյա վերապատրաստում՝ միջազգային ցուցահանդեսներին արդյունավետ մասնակցության հմտությունների կատարելագործման նպատակով: Միաժամանակ, 2019թ.-ին արտահանվել է շուրջ 2.8 մլն, իսկ 2024թ.-ին՝ շուրջ 4.2 մլն լիտր գինի, կամ գինու արտահանման ծավալը 2024թ.-ին 2019թ. համեմատությամբ ավելացել է շուրջ 1.4 մլն լիտրով կամ 49.7 տոկոսով: **Աշխարհագրական նշումների մասին օրենքի բարելավման միջոցով ոլորտային ասոցիացիաների ստեղծման խթանում և տարեկան 2-3 անվանում հայկական նշումներով արտադրանքի արտադրություն և գրանցում** Էկոնոմիկայի նախարարի հրամանով հաստատված «Հայկական մածուն», «Հայկական լավաշ», «Հայկական բաստուրմա» և «Հայկական սուջուխ» աշխարհագրական նշումով արտադրանքների գրանցման համար համապատասխան հայտեր են ներկայացվել Մտավոր սեփականության գրասենյակ, որոնք պաշտոնապես գրանցվել և իրավապաշտպանություն են ստացել ՀՀ-ում: Մշակվել են Հայկական բրենդի և Վայոց Ձորի գինիներ աշխարհագրական նշումով արտադրանքների տեխնիկական հատկորոշումների նախագծերը, որոնք		

			առաջիկայում կներկայացվեն պետական գրանցման: Բացի այդ, աշխարհագրական նշումով նոր արտադրանքների գրանցման գործընթացը խթանելու նպատակով Էկոնոմիկայի նախարարությունում 2025թ. դեկտեմբերի 5-ին կազմակերպվել է հանդիպում սննդամթերքի ոլորտային միությունների, Հայ խոհարարական ավանդույթների զարգացման և պահպանման ՀԿ-ի և մասնավոր հատվածի ներկայացուցիչների մասնակցությամբ, որի արդյունքում պայմանավորվածություն է ձեռք բերվել Էկոնոմիկայի նախարարություն ներկայացնել առաջարկություններ՝ աշխարհագրական նշումով նոր արտադրանքներ գրանցելու վերաբերյալ:		
		9.5 Պարենային անվտանգության համակարգի զարգացման ռազմավարության և 2022-2026 թվականների գործողությունների ծրագրի մշակում	**Միջոցառման կատարման ժամկետ սահմանված է եղել 2022 թվականի ավարտը:**		
		9.6 Սննդամթերքի անվտանգության ապահովում «Սննդամթերքի անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման հաստատում	Կատարված է: ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից մշակվել և ՀՀ կառավարության 2023թ. մարտի 23-ի N 356-Լ որոշմամբ ընդունվել է «Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության համակարգի զարգացման ռազմավարությունը և դրանից բխող 2023-2028թթ. գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» որոշումը:		

		9.7 Բույսերի պաշտպանության միջոցառումների իրականացում	Կատարված է: ՀՀ ԷՆ «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետների կողմից բույսերի հիվանդությունների, վնասատուների և մկնանման կրծողների հայտնաբերման նպատակով ՀՀ համայնքների 180 հազ. հա գյուղատնտեսական նշանակության հողատեսքերում և գյուղատնտեսական նշանակության հողատեսքերին հարող անմշակ տարածքներում իրականացվել են մշտադիտարկման աշխատանքներ: Միաժամանակ մարզերում տեղադրվել են 1010 հատ արևելյան պտղակերի, 422 հատ խնձորենու պտղակերի և 600 հատ խաղողի ողկույզակերի ֆերոմոնային թակարդներ՝ հնդավորների, կորիզավորների և խաղողի վազի վնասատուների ժամանակին հայտնաբերման նպատակով: Մշտադիտարկման արդյունքների հիման վրա շուրջ 100 հազ. հա հողատեսքերում իրականացվել են պայքարի աշխատանքներ, թվով 85 բնակավայրերի տրամադրվել են գյուղատնտեսական նշանակության հողերի կազմված ագրոքիմիական քարտեզներ և պարարտացման կիրառման գիտականորեն հիմնավորված երաշխավորագրեր:		
		9.8 Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում ծրագրի իրականացում	Կատարված է: Էկոնոմիկայի նախարարության «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրի շրջանակներում իրականացվել է 6 619 725 հատ միջոցառում: 2026 թվականին նախատեսվում է իրականացնել 4 929 841 հատ միջոցառում:		

		9.9 Դաբաղ հիվանդության շճահետազոտության միջոցառումների իրականացում	**Միջոցառման ժամկետ Էկոնոմիկայի նախարարության համար սահմանված է եղել մինչև 2022 թվականի ավարտը:** ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը 2023 թվականի հունվարի 1-ից չի հանդիսանում ծրագրի գլխավոր ֆինանսական կարգադրիչը:		
		9.10 Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի լաբորատոր փորձաքննության միջոցառումների իրականացում	**Միջոցառման ժամկետ Էկոնոմիկայի նախարարության համար սահմանված է եղել մինչև 2022 թվականի ավարտը:** ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը 2023 թվականի հունվարի 1-ից չի հանդիսանում ծրագրի գլխավոր ֆինանսական կարգադրիչը:		
		9.11 Հողային ռեսուրսների նպատակային և ջրային ռեսուրսների խնայողական ու արդյունավետ օգտագործում	Կատարված է: **Գյուղատնտեսական նշանակության հողերը արդյունավետ օգտագործելու, չօգտագործվող հողերը շրջանառության մեջ ներառելու, հողերի խոշորացման նպատակով միջոցառումների մշակում և իրականացում** ՀՀ-ում գյուղատնտեսական նշանակության հողերի միավորման (կոնսոլիդացիայի) աջակցության 2023-2026թթ. ծրագրի շրջանակներում կնքվել է 11 պայմանագիր՝ 810 հա ընդհանուր մակերեսով հողերի միավորման համար, որից 2-ը՝ 30-100 հա, 2-ը՝ 100-200 հա և 7-ը՝ 5-30 հա մակերեսով հողերի միավորման նպատակով: Ծրագրում ՀՀ կառավարության ս.թ. նոյեմբերի 20-ի N 1625-Լ որոշմամբ կատարվել են փոփոխություններ. ծրագրով նախատեսվող միավորված հողամասի նվազագույն մակերեսը գործող 5 հա-ի փոխարեն սահմանվել է 3 հա, իսկ		

			պետական աջակցության չափը գործող 30%-ի փոխարեն սահմանվել է միավորված հողամասերի կադաստրային արժեքի 50%-ի չափով: **Ոռոգման առաջադիմական տեխնոլոգիաներով ոռոգելի հողատարածքների ավելացում՝ շուրջ 3000հա-ով, (2025թ.-ին՝ շուրջ 1000 հա-ով)** Ինտենսիվ այգեգործության ծրագրերի շրջանակում հիմնվել է 1365 հա ինտենսիվ այգի (ոռոգման պարտադիր բաղադրիչով) և 47 հա ընդհանուր մակերեսով հողատարածքներում ներդրվել են ոռոգման արդիական ջրախնայող համակարգեր: Միևնույն ժամանակ, ծրագրի շրջանակում հաստատվել է 1399 հա այգեհիմնման հայտ (ոռոգման պարտադիր բաղադրիչով), իսկ միայն ոռոգման արդիական համակարգերի ներդրման բաղադրիչով հաստատվել է 307 հա-ի հայտ: «Հայաստան-Ոռոգվող գյուղատնտեսության զարգացումը Արարատի և Արմավիրի մարզերում» ծրագրի շրջանակում ընտրված թիրախային տարածքներում՝ ՀՀ Արմավիրի մարզի Նորակերտ և Բաղրամյան, և ՀՀ Արարատի մարզի Արարատ, Այգավան, Գոռավան, Ավշար, Դաշտաքար, Վեդի, Նոյակերտ, Սիսավան, Ուրցաձոր բնակավայրերում նախատեսվում է իրականացնել հողերի կոնսոլիդացիայի առնվազն 10 միջոցառում: Ծրագրի շրջանակում ձեռք են բերվել արդիական ոռոգման համակարգերի 9 ֆիլտրացիոն կայաններ: Նախատեսվում է ներդնել կաթիլային ոռոգման համակարգ՝ 1200 հա մակերեսով հողատարածքներում: Աշխատանքներ են ընթանում ֆերմերային տնտեսությունների հետ՝ հողերի միավորման, կոոպերատիվների հիմնադրման, ցուցադրական		

			ֆերմերային տնտեսությունների հիմնման և հոռոգման համակարգի բարելավման նոր մեթոդների ներդրման նպատակով:		
		9.12 Աջակցություն գիտակրթական համակարգերին, թվային գյուղատնտեսության զարգացմանը և շուկայի պահանջներին համապատասխան կադրերի պատրաստմանը	Կատարված է: **1. Աջակցություն գիտակրթական համակարգերի բարելավմանը** ՀՀ ԷՆ «Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն՝ • 2023-2026թթ.՝ բանջարաբոստանային մշակաբույսերի 18 սորտի գրանցում (պոմիդորի 5, քաղցր տաքդեղի 2, կծու տաքդեղի 4, սմբուկի 1, վարունգի 1, դդմիկի 1, դդումի 1, սեխի 1, ֆիզալիսի 1, ոսպի 1), • տեղական սելեկցիոն և հինավուրց սորտերի պահպանության կրկնակի ապահովում Սվալբորդի միջազգային սերմերի պահոցում (256 հատ նմուշ) և Սլովակիայի Հանրապետության ազգային գենետիկական բանկում (256 հատ նմուշ): • ժամանակակից սարքավորումներով վերազինման և գիտական ստորաբաժանումների նյութատեխնիկական բազայի արդիականացման		

			շրջանակներում՝ 1) 2023թ. ձեռք է բերվել և գործարկվել հողի և ջրի բաղադրության ուսումնասիրման արագ փորձաքննությունների անալիզատոր, 2) 2025թ. մշակվել և ներկայացվել է հայտ՝ ֆիտոտրոն համակարգով կլիմայական խցիկի, գենետիկական բանկի համար սառնարանի, վիտամինների և օրգանական թթուների միաժամանակյա որոշման համար ԲԱՀՔ համակարգի ձեռքբերման համար: Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի և ՀՀ ԷՆ «Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի միջև կնքվել է սարքերի (սարքավորումների) նվիրաբերության մասին պայմանագիր, որի շրջանակում կազմակերպությանը նվիրաբերվել է «Ջրի և հողի բաղադրության ուսումնասիրման արագ փորձաքննությունների անալիզատոր» սարքը: **2. Թվայնացված տվյալների շտեմարանի առկայություն** Գյուղատնտեսության թվայնացման նպատակով ստեղծվել և պարբերաբար թարմացվել են Էկոնոմիկայի նախարարության maps.mineconomy.am պորտալում արտապատկերված 9 տարածական թեմատիկ շերտեր՝ - Գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի աջակցության ծրագրի տարածական շերտը, որտեղ քարտեզագրված են նույնանուն ծրագրի 1019 շահառուների տվյալները: - ՀՀ-ում ինտենսիվ այգեգործության զարգացմանն ուղղված պետական աջակցության շրջանակում հիմնված այգիների «Ինտենսիվ		

			այգիներ» տարածական շերտը, որտեղ քարտեզագրված է 4284 հեկտար ինտենսիվ այգի: - Փոքր և միջին «Խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և տեխնոլոգիական ապահովման աջակցության ծրագրի շերտը, որը ներառում է 58 քարտեզագրված անասնաշենք: - Մթերատվության բարձրացման ծրագրի տարածական շերտը, որտեղ թվայնացվել և քարտեզագրվել են 306 գլուխ սերմնավորված կենդանու (ականջապիտակի համար) տվյալները: - Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շերտը, որտեղ տեղորոշվել և քարտեզագրվել են 267 գյուղատնտեսական հումք մթերող ընկերություններ: - Ոչխարաբուծության և այծաբուծության զարգացման ծրագրի տարածական շերտը, որը ներառում է 1962 գլուխ կենդանիների տվյալներ: - Փոքր և միջին ջերմատնային տնտեսությունների ներդրման աջակցության ծրագրի շերտը, որտեղ քարտեզագրված են 9.4 հեկտար ջերմատներ: - ՀՀ-ում գործող սպանդանոցների տարածական շերտը, որը ներառում է 133 գործող սպանդանոցների տվյալներ: - «ՀՀ-ում 2019–2024թթ. տավարաբուծության զարգացման» ծրագրի տարածական շերտը, որտեղ քարտեզագրվել են 2,395 գլուխ կենդանիների տվյալներ: Կադաստրի կոմիտեի կողմից ներդրված Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի ազգային գեոպորտալի միջոցով տրամադրվել է		

			բազային քարտեզագրական շերտերի հասանելիություն: Ազգային գեոպորտալին ինտեգրվել են նաև թվային գյուղատնտեսությանն առնչվող թեմատիկ քարտեզագրական շերտերը, ինչը կարող է նպաստել թվային գյուղատնտեսության կայուն զարգացմանը: ՀՀ ԷՆ «Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունում Գենետիկական բանկի նմուշների թվայնացված շտեմարանի առկայություն՝ • 2021-2025թթ.՝ ավելացում տարեկան 5-10%, • Եվրոպական միջազգային կատալոգի (EURISCO) ազգային մակարդակով թարմացում՝ նվազագույնը տարեկան մեկ անգամ և ըստ անհրաժեշտության, • Կենսաբազմազանության միջազգային հարթակի (GENESYS) կենտրոնի մակարդակով տվյալների համակարգում և թարմացում՝ տարեկան մեկանգամ և ըստ անհրաժեշտության: Հայաստանի ազգային ագրարային համալսարանի կողմից Գիտական և գիտատեխնիկական պետական ծրագրի նպատակային-ծրագրային ֆինանսավորման շրջանակներում 2025 թվականին ՀԱԱՀ Ջրային և հողային ռեսուրսների կառավարման տեխնոլոգիական հետազոտական կենտրոնի կողմից իրականացվել է «Գյուղատնտեսական նշանակության հողերի արդյունավետ օգտագործման և կայուն գյուղատնտեսության զարգացման միջոցառումների մշակում թվային տեխնոլոգիաների կիրառմամբ» գիտական թեմա, որի արդյունքում Արարատի մարզի 10 բնակավայրերի օրինակով ուսումնասիրվել և մշակվել են թվային տեխնոլոգիաների		

			կիրառմամբ գյուղատնտեսական նշանակության հողերի արդյունավետ օգտագործման հիմնարար սկզբունքները, մշակվել են նաև մի շարք մաթեմատիկական մոդելներ, որոնք թույլ են տալիս հողօգտագործումը դարձնել արդյունավետ և փոքր տնտեսություններին գիտական հիմնավորմամբ ներկայացնել հողերի կոնսոլիդացիայի անհրաժեշտությունն ու նպատակահարմարությունը արդի շուկայական հարաբերությունների պայմաններում: **3. Խորհրդատվական և տեղեկատվական ծառայությունների մատուցման արդյունավետ մեխանիզմների մշակում և ներդրում, գիտելիքահենք գյուղատնտեսության խթանում** Էկոնոմիկայի նախարարության աշխատակիցների կողմից իրականացվել են մի շարք իրազեկման աշխատանքներ՝ - նախարարությունում ստացված շուրջ 1900 հեռախոսազանգերին ի պատասխան տրամադրվել է խորհրդատվություն գյուղատնտեսության ոլորտի պետական օժանդակության ծրագրերի վերաբերյալ, - նախարարություն այցելած 53 քաղաքացիների տրամադրվել է խորհրդատվություն գյուղատնտեսության ոլորտի պետական օժանդակության ծրագրերի վերաբերյալ, - իրականացվել է շուրջ 140 հանդիպում ՀՀ բոլոր մարզերում, տրամադրվել է խորհրդատվություն գյուղատնտեսության ոլորտի պետական օժանդակության ծրագրերի վերաբերյալ: Էկոնոմիկայի նախարարության աշխատակիցների կողմից մի շարք հանդիպումներ են իրականացվել գյուղատնտեսական մասնագիտություններով		

			կրթություն իրականացնող տասը նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների սովորողների հետ, մասնավորապես՝ - Կոտայքի պետական տարածաշրջանային քոլեջում, - Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Վանաձորի մասնաճյուղում, - Ալավերդու արհեստագործական պետական ուսումնարանում, - Մասիսի պետական գյուղատնտեսական քոլեջում, - Մարալիկի պետական ուսումնարանում, - Ամասիայի պետական ուսումնարանում, - Արմավիրի տարածաշրջանային պետական քոլեջում, - Էջմիածնի արհեստագործական պետական ուսումնարանում, - Էջմիածինի Վ. Համազասպյանի անվան պետական քոլեջում, - Արագածի արհեստագործական պետական ուսումնարանում: ՀՀ ԷՆ «Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունում՝ • 2021-2025թթ. տարեկան 70-100 անգամ իրականացվել են գործնական դասընթացներ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ուսանողների համար,		

			• տրամադրվել է խորհրդատվություն մարզերի փոքր և միջին գյուղատնտեսությունում տնտեսավարողների՝ տարեկան շուրջ 60 և ավելի, • տրամադրվել է խորհրդատվություն գիտական կենտրոնում՝ շուրջ 1600: Հայաստանի ազգային ագրարային համալսարանի կողմից Սյունիքի մարզի Կապան, Գորիս, Սիսիան համայնքներում անցկացվել են դասընթացներ անձրևաջրերի կուտակման և արդյունավետ ոռոգման վերաբերյալ, մասնակիցների թիվը՝ 25: Հայաստանի ազգային ագրարային համալսարանի «Ագրոկենսատեխնոլոգիայի գիտական կենտրոն» մասնաճյուղի գիտնականների կողմից մասնագիտական խորհրդատվություն է իրականացվել Լոռու մարզի Անտառամուտ, Ուռուտ, Շիրակի մարզի Ազատան, Երազգավորս և Գեղարքունիքի մարզի Տորֆավան, Կարմիր համայնքներում՝ կարտոֆիլի, ցորենի և հատիկաընդեղենի արտադրական և սերմնաբուծական տեխնոլոգիաների առաձնահատկությունների ուղղությամբ, որոնցից յուրաքանչյուրին մասնակցել է 20-25 տնտեսավարող: ՀՀ 15 ՋՕԸ-ում անցկացվել են վերապատրաստման դասընթացներ ոռոգման համակարգերի և ոռոգման ջրի արդյունավետ կառավարման ուղղությամբ, մասնակիցների թիվը՝ 140 գյուղացիական տնտեսություններ: Սիսիանի և Հրազդանի «Հայանտառ» ՊՈԱԿ-ում անցկացվել են նորագույն ոռոգման տեխնոլոգիաների վերաբերյալ խորհրդատվություններ, շահառուների թիվը՝ 25: Վայոց ձորի մարզի Վայք համայնքի Գնդևազ բնակավայրում և Գեղարքունիքի մարզի Գավառ,		

			Մարտունի, Վարդենիս, Ճամբարակ համայնքներում անցկացվել են ջրախնայողական տեխնոլոգիաների վերաբերյալ խորհրդատվություններ՝ թվով 65 գյուղացիական տնտեսությունների համար: Հայաստանի ազգային ագրարային համալսարանը 2024 թվականից մինչև 2025 թվականն իրականացրել է ԱՄՆ ՄԶԳ Հայաստանում աշխատուժի զարգացման ծրագիրը, որի շրջանակներում կազմակերպվել են 15–29 տարեկան պատանիների և երիտասարդների համար կարճաժամկետ մասնագիտական դասընթացներ, որոնց մասնակցել է ավելի քան 2000 մարզաբնակ երիտասարդ: Բացի այդ, ՀԱԱՀ-ն ներդրել է «Ագրոտեխնոլոգիա» մասնագիտական կողմնորոշման դասընթացը ՀՀ Տավուշի և Սյունիքի դպրոցներում: Ընդհանուր առմամբ, ավելի քան 350 աշակերտ 2024-2025թթ. ուսումնական տարվա ընթացքում ուսումնառություն է ստացել «Ագրոտեխնոլոգիա դասընթաց» ծրագրի շրջանակներում: 2025թ. շրջանավարտներից 7-ը արդեն շարունակել են իրենց ուսումը համալսարանում: Ներկայումս ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով ՀՀ այլ դպրոցներ նույնպես հնարավորություն ունեն ներմուծել այս դասընթացը որպես հիմնական առարկա: 220 երիտասարդ մասնագետ վերապատրաստվել է հետևյալ ուղղություններով՝ - բուսաբուծական մթերքների վերամշակում՝ պահածոյացման տեխնոլոգիաներ, - դեկորատիվ բույսերի ագրոտեխնոլոգիա և լանդշաֆտային դիզայն,		

			- տրակտորիստ-մեքենավարներ, - հացատեսակների և հրուշակեղենի արտադրություն, - շոկոլադագործություն, - ձկնաբուծություն, - չրագործություն, - քրաֆտ գարեջրագործություն, - մեղվաբուծության հիմունքներ, - ԱԹՍ-ների կիրառմամբ գյուղատնտեսական սրսկումների իրականացում, - պտղաբուծություն. - դասավանդման ժամանակակից մեթոդներ, - ջերմատնային մշակաբույսերի մշակություն և կառավարում: Հողային և ջրային ռեսուրսների կրթական ծրագրով սովորող գյուղաբնակ ուսանողների հետ իրենց բնակավայրերում իրականացվել են գյուղատնտեսության գործունեության կարողությունների բացահայտման աշխատանքներ, հիմք ընդունելով ագրարային ճարտարագիտության ոլորտում արդի տեխնոլոգիական լուծումները: 2024-2025 ուսումնական տարում մշակվեց և հաստատվեց «Ագրոմեխատրոնիկա և ճշգրիտ ռոբոտատեխնիկա» բակալավրի կրթական ծրագիրը, որն արդեն 2025-2026 ուսումնական տարում առաջարկվեց նոր դիմորդներին և այժմ 13 ուսանող ուսանում են այդ կրթական ծրագրով:		

11.	Որակի ենթակառուցվածքների զարգացում	11.1Կանոնակարգվող ոլորտներում լաբորատոր կարողությունների զարգացում, մասնավորապես, գործող փորձարկման լաբորատորիաներում որոշ ուղղություններով համապատասխան սարքավորումներով հագեցվածության ապահովում և վերազինում, ՀՀ-ում բացակա լաբորատոր կարողությունների ձևավորում»	Միջոցառման կիրարկումն ապահովելու նպատակով 2025 թվականի պետական բյուջեի միջոցներով նախատեսվել է սննդամթերքի, կոսմետիկայի և խմիչքների փորձարկման լաբորատորիաների վերազինում և կարողությունների ընդլայնում, ինչպես նաև թեթև արդյունաբերության արտադրանքի փորձարկման լաբորատորիայի հիմնում: Սարքավորումների ձեռքբերման մրցույթներն իրականացվել են սահմանված ժամկետներում և կնքվել են համապատասխան պայմանագրեր: Լաբորատորիաների վերազինումը հնարավորություն կտա ապահովել փորձարկումների բարձր ճշտություն և արդյունավետություն՝ կրճատելով ժամկետները, նվազեցնելով ծախսերն ու մարդկային գործոնով պայմանավորված սխալների ռիսկերը: Թեթև արդյունաբերության արտադրանքի փորձարկման լաբորատորիայի հիմնումը կստեղծի պայմաններ ՄՄ ՏԿ 017/2011 տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջների համապատասխանության փորձարկումների ամբողջ ծավալով իրականացման համար՝ նպաստելով շուկայում անվտանգ արտադրանքի շրջանառությանը և սպառողների իրավունքների պաշտպանության մակարդակի բարձրացմանը:		

		11.2. Արդյունաբերական չափագիտական կարողությունների ձևավորում և զարգացում՝ տրամաչափարկման լաբորատորիաների ձևավորում, գործարկում և զարգացում	Այս միջոցառման կիրարկման և տրամաչափարկման կարողությունների զարգացման նպատակով իրականացվել են հետևյալ հիմնական աշխատանքները. 2025 թվականի մայիսին «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ում (ՍՉԱՄ) հիմնված զանգվածի և ջերմային չափումների տրամաչափարկման լաբորատորիաները ստացել են միջազգային ճանաչում՝ հավատարմագրվելով Հունաստանի հավատարմագրման համակարգի (ESYD) կողմից: Միջազգային հավատարմագրման ոլորտի ընդլայնման նպատակով ESYD-ին ներկայացվել է հայտ ՍՉԱՄ-ում հիմնված էլեկտրական մեծությունների, ճնշման և պտտման մոմենտի տրամաչափարկման լաբորատորիաների գնահատման համար: 2025 թ. հոկտեմբերին միջազգային գնահատողների կողմից իրականացված տեղում գնահատման ընթացքում պարբերական գնահատում են անցել նաև միջազգային հավատարմագրում ստացած վերոգրյալ լաբորատորիաները, որոնց արդյունքները եղել են դրական: Միաժամանակ, ՍՉԱՄ տրամաչափարկման լաբորատորիաների հավատարմագրման ոլորտի ընդլայնման նպատակով հայտ է ներկայացվել նաև «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ՝ էլեկտրական մեծությունների և հաճախականության, ճնշման, պտտման մոմենտի և անկյունագծային տրամաչափարկման ուղղություններով: 2025 թ. նոյեմբերին իրականացված գնահատումների		

			գործընթացը շարունակվում է, նախնական արդյունքները դրական են: Բացի այդ, «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվել է ՍՉԱՄ որակավորման ստուգում իրականացնողի պարբերական գնահատում՝ հաստատելով համապատասխանությունը ԳOUS ISO/IEC 17043 ստանդարտի պահանջներին: Միջազգային փորձագետների կողմից իրականացվել են նաև էլեկտրական մեծությունների, ժամանակի և հաճախականության, ճնշման և պտտման մոմենտի տրամաչափարկման լաբորատորիաների և որակի կառավարման համակարգի ներքին աուդիտներ: Իրականացվել են միջլաբորատոր համեմատություններ՝ դրական արդյունքներով, էլեկտրական մեծությունների, ճնշման, պտտման մոմենտի և զանգվածի տրամաչափարկման ուղղություններով՝ համապատասխանաբար Հունաստանի, Չեխիայի և Վրաստանի չափագիտության մարմինների հետ: Ներկայում շարունակվում են միջլաբորատոր համեմատությունները Վրաստանի գործընկեր կազմակերպության հետ գծային/անկյունագծային և ջերմային ուղղություններով: Միջազգային հավատարմագրված տրամաչափարկման լաբորատորիաների առկայությունը Հայաստանի համար ունի ռազմավարական նշանակություն՝ ապահովելով չափումների միջազգային ճանաչում, նվազեցնելով տնտեսավարողների ծախսերը, նպաստելով արտահանման գործընթացների արդյունավետությանը:		

			Միաժամանակ նշենք, որ Էկոնոմիկայի նախարարության և ՄԱԿ-ի Արդյունաբերական զարգացման կազմակերպության միջև 2021 թվականին մեկնարկած «Աջակցություն Հայաստանի որակի ենթակառուցվածքին» ծրագրի շրջանակներում նախատեսված տրամաչափարկման լաբորատորիաների հիմնման աշխատանքների հիմնական մասը ավարտվել է, ձեռք են բերվել անհրաժեշտ սարքավորումները, ինչպես նաև իրականացվել են մասնագետների վերապատրաստման ծրագրեր՝ միջազգային փորձագետների ներգրավմամբ:		
		11.3 Համապատասխանության գնահատման և հավատարմագրման կարողությունների զարգացում՝ թիրախ սահմանելով հավատարմագրման ազգային մարմնի միջազգային ճանաչմանն ուղղված բազմակողմ ճանաչման	Այս միջոցառման կիրարկմանն ուղղված գործընթացի ապահովման նպատակով իրականացվել են հետևյալ հիմնական աշխատանքները. Հավատարմագրման ոլորտում միջազգային և տարածաշրջանային համակարգերին ինտեգրման շրջանակում «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի (ԱՐՄՆԱԲ) ներկայացուցիչները մասնակցել են Հավատարմագրման Եվրոպական Համագործակցության (EA)		

		համաձայնագրերի կնքումը տարածաշրջանային և միջազգային հավատարմագրման կազմակերպությունների հետ (EA, ILAC, IAF)»	համապատասխան կոմիտեների, Բազմակողմ ճանաչման համաձայնագրերի խորհրդի նիստերին և EA Գագաթնաժողովի աշխատանքներին, ինչպես նաև EA, ILAC և IAF փաստաթղթերի նախագծերի քննարկումներին: ԱՐՄՆԱԲ-ի ներկայացուցիչները մասնակցել են Գերմանիայի չափագիտության մարմնի (PTB) կողմից կազմակերպված մասնագիտական դասընթացների, որոնք ուղղված են եղել հավատարմագրման մարմինների տեխնիկական կարողությունների և որակի կառավարման համակարգերի զարգացմանը, հավատարմագրման մարմնի ղեկավարության դերերին ու պատասխանատվություններին, ինչպես նաև ISO/IEC 17025, ISO/IEC 17011, ISO 37001, ISO/IEC 17067 ստանդարտների և համապատասխանության գնահատման սխեմաների գնահատման պահանջների (IAF MD 25, EA-1/22 A-AB) խորացմանը, ներառյալ օդի արտանետումների չափման, հաշվառման և վավերացման (MRV) հավատարմագրման սխեմաները: EA-ի հետ բազմակողմ ճանաչման համաձայնագիր կնքելու նպատակով 2025 թվականի նոյեմբերի 24-28-ը EA-ի փորձագիտական խմբի կողմից իրականացվել է ԱՐՄՆԱԲ-ի տեղում գնահատումը 4 հավատարմագրման սխեմաներով՝ ԻՍՕ/ԻԷԿ 17025 փորձարկման լաբորատորիաներ, ԻՍՕ/ԻԷԿ 17025 տրամաչափարկման լաբորատորիաներ, ԻՍՕ/ԻԷԿ 17065 արտադրանքի, ծառայությունների, գործընթացների սերտիֆիկացման		

			մարմիններ, ԻՍՕ/ԻԷԿ 17021-1 կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմիններ: Գնահատման ընթացքում արձանագրվել է ԱՐՄՆԱԲ-ի համապատասխանությունը ISO/IEC 17011 միջազգային ստանդարտին, ինչպես նաև տարածաշրջանային և միջազգային հավատարմագրման կազմակերպությունների (EA, ILAC, IAF) փաստաթղթերի պահանջներին: Միևնույն ժամանակ արձանագրվել են որոշ անհամապատասխանություններ և բարելավման առաջարկներ, որի շրջանակներում ԱՐՄՆԱԲ-ը նախատեսում է իրականացնել բոլոր անհրաժեշտ ուղղիչ գործողությունները: Էլեկտրոնային հավատարմագրման գործընթացի (e-accreditation) ավտոմատացման համակարգը գործարկվել է (https://e-accreditation.armnab.am/applicant/login), որը հնարավորություն է տալիս անցում կատարել թղթային փաստաթղթաշրջանառությունից էլեկտրոնայինի՝ ապահովելով գործընթացի թափանցիկություն, աշխատաժամանակի կրճատում և հայտի ամբողջական հետևելիություն՝ մինչև վկայագրի տրամադրում, ինչպես նաև հավատարմագրված փաթեթների արխիվացում: 2025 թվականի դեկտեմբերի 17-ի դրությամբ հավատարմագրվել են՝ 8 փորձարկման լաբորատորիա, 2 տրամաչափարկման լաբորատորիա, 7 արտադրանքի սերտիֆիկացման մարմին, 3 կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմին, 2 ֆիզիկական անձանց սերտիֆիկացման մարմին և		

			3 հսկողություն իրականացնող մարմին: Միաժամանակ հավատարմագրման ոլորտը ընդլայնել են՝ 3 փորձարկման լաբորատորիա, 1 արտադրանքի սերտիֆիկացման մարմին, 2 կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմին և 1 հսկողություն իրականացնող մարմին, ինչը վկայում է հավատարմագրման համակարգի շարունակական զարգացման մասին:		
		11.4 ՀՀ-ում գործող տեխնիկական կանոնակարգերի, համապատասխանության գնահատման ընթացակարգերի և ստանդարտների վերանայում, ԵԱՏՄ նոր մշակվող տեխնիկական կանոնակարգերի, համապատասխանության գնահատման ընթացակարգերի և ստանդարտների մշակմանը մասնակցություն, արտադրանքի անվտանգության ապահովման նպատակով նոր տեխնիկական կանոնակարգերի մշակում և համակարգում	1. ԵԱՏՄ շրջանակներում. ԵԱՏՄ անդամ պետությունների տնտեսությունների կայունության բարձրացմանն ուղղված միջոցառումների շրջանակներում (տեխնիկական կանոնակարգման ոլորտին առնչվող) հայկական կողմը ներկայացրել է դիրքորոշում՝ Տեխնիկական կանոնակարգման օբյեկտ հանդիսացող արտադրանքի՝ թվով 20 ԵԱՏՄ պարենային և ոչ պարենային արտադրանքի մասով տեխնիկական կանոնակարգերի և/կամ դրանց կիրարկումն ապահովող ստանդարտների, համապատասխանության գնահատման ընթացակարգերի վերաբերյալ, ՀՀ կողմից մշակվող «Նիկոտին պարունակող և նիկոտին չպարունակող արտադրանքի մասին» ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգի նախագիծը լրամշակվել և ներկայացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովին՝ ԵԱՏՄ անդամ-պետություններում համաձայնեցման և ներպետական ընթացակարգերի ապահովման նպատակով: 2. ՀՀ (ազգային) տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների կիրարկումն ապահովելու նպատակով՝		

			• Մշակվել և իրականացվել են. Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի հոկտեմբերի 2-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 22-ի N 607-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» N 1400-Ն որոշում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 5-ի N 219-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 10-ի N 155-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ (լրամշակման փուլում է), «Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 16-ի N 1795-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ (լրամշակման փուլում է):		
		11.5 Որակի ենթակառուցվածքի համակարգի բաղկացուցիչ ոլորտների՝ բարեփոխման ռազմավարության մշակում և ՀՀ կառավարության կողմից հաստատում	Էկոնոմիկայի նախարարության 01/29454-2025 գրությամբ Վարչապետի աշխատակազմ է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության որակի ենթակառուցվածքի բարեփոխման 2026 – 2031 թվականների ռազմավարական ծրագիրը և դրա կատարումն ապահովող գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի փաթեթը:	Որակի ենթակառուցվածքի համակարգի բաղկացուցիչ ոլորտների՝ բարեփոխման ռազմավարության (այսուհետ՝ Ռազմավարություն) մշակման շրջանակներում ԵՄ կողմից ֆինանսավորվող և ՄԱԿ Արդյունաբերական զարգացման կազմակերպության (UNIDO) համակարգմամբ իրականացվող «Աջակցություն Հայաստանում	

				որակի ենթակառուցվածքներին» ծրագրի շրջանակներում ԵՄ փորձագետների կողմից մշակվել և 2024 թվականի երկրորդ կիսամյակում Էկոնոմիկայի նախարարությանն է ներկայացվել որակի ենթակառուցվածքի բարեփոխման ռազմավարական ծրագրի առաջին խմբագրության նախագիծը: Ներկայացված նախագծի քննարկումների արդյունքում պարզվել է, որ Ռազմավարության նախագիծը չի ներառում անհրաժեշտ ռազմավարական գործողությունների ամբողջական փաթեթը, չի պարունակում իրատեսական որակական և քանակական արդյունքային ցուցանիշներ, ինչպես նաև չի ընդգրկում որակի ենթակառուցվածքի բաղադրիչ ոլորտների՝ տեխնիկական կանոնակարգման և շուկայի վերահսկողության ոլորտներին առնչող դրույթները: Նշված հանգամանքներով պայմանավորված՝ նախագիծը մի քանի անգամ վերադարձվել է ԵՄ փորձագետներին՝ վերախմբագրման: Վերոնշյալ գործընթացների հետևանքով հնարավոր չի եղել	

				ապահովել միջոցառման կատարման սահմանված ժամկետի պահպանումը: Միջոցառման կատարման վերջնաժամկետի երկարաձգման մասով ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից առաջարկ է ներկայացվել Վարչապետի աշխատակազմ, որը քննարկվել է Ֆինանսատնտեսական նախարարական կոմիտեի նիստում, սակայն չի ընդունվել, ինչի արդյունքում տվյալ միջոցառումը ներառվել է չկատարված կամ մասնակի կատարված միջոցառումների ցանկում: ԵՄ փորձագետների կողմից 2025 թվականի հունիսին ներկայացված ռազմավարության երրորդ խմբագրության վերլուծության արդյունքում ռազմավարության նախագծի մշակման գործընթացում ներգրավվել են նաև այլ փորձագետներ, որոնց մասնակցությամբ մշակվել է ռազմավարության չորրորդ խմբագրության նախագիծը, որը 2025 թվականի նոյեմբերի 25-ին ներկայացվել է շահագրգիռ պետական մարմիններին: Ստացված առաջարկությունների և դիտարկումների ամփոփման արդյունքում նախագիծը	

				լրամշակվել և ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ:	